Azg Ազգ

6 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2010 ՇՈՐԵՔՇԱԲԹԻ 181 (4561)

ISSN: 1829-1651

Վրաստանին հրավիրել են ՆԱՏՕ-ի լիսաբոնյան գագաթաժողով

Վրաստանը Լիսաբոնում նոյեմբերին կայանալիք ՆԱՏՕ-ի գագաթաժողովի հրավեր է ստացել: Այդ մասին, ըստ «Գրուզիա օնլյան» կայքէջի, տեղեկացրել է Վրաստանի նախագահի մամուլի քարտուղար **Մանանա Մանջղալաձեն**: Նրա ներկայացմամբ, ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսսենի այցելությունը Վրաստան լիսաբոնյան գագաթաժողովի նախօրեին մեծապես կարեւոր էր:

Միխեիլ Սաակաշվիլու մամուլի քարտուղարն ընդգծել է, թե ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի թբիլիսյան հայտարարությունները Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին հաստատապես անդամակցելու մասին, նշանակում են, որ Վրաստանը կդառնա ՆԱՏՕ-ի անդամ, երբ կատարի ներկայացվող պահանջները:

Ա. Հ.

Ի՞նչ սպասենք բյուջե 2011-ից

Մանրամասնում է ֆինանսների փոխնախարար Պավել Սաֆարյանը

Կառավարությունն արդեն հաստատել է երկրի գլխավոր ֆինանսական փաստաթուղթը՝ 2011-ի բյուջեն, որը կուղարկվի Ազգային Ժողովի քննարկմանը: Եկող տարվա ֆինանսական ցուցանիշների եւ հատկապես սոցիալական ոլորտում նախատեսվող փոփոխությունների մանրամասներին տեղեկանալու նպատակով հարցազրույցի հրավիրեցինք ֆինանսների փոխնախարար Պավել Սաֆարյանին:

- Պրն Սաֆարյան, ի՞նչ մակրոտնտեսական հիմքեր են դրված 2011-ի հիմքում:

- 2011-ի բյուջեով համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) ծրագրված է 3 տրիլիոն 763 մլրդ դրամ, այս տարվա 3 տրիլիոն 214 մլրդ դրամի դիմաց: Այսինքն, եկող տարի ակնկալվում է մոտ 550 մլրդ դրամի կամ 4,6 տոկոս տնտեսական աճ: Ընդհանուր եկամուտները նախատեսված են մոտ 850 մլրդ դրամ, որից հարկային եկամուտները եւ տուրքերը՝ 650 մլրդ դրամ, սոցիալական վճարները՝ 123 մլրդ դրամ, մնացածը ոչ հարկային եկամուտներն ու դրամաշնորհներն են: Պետական բյուջեի դեֆիցիտը կնվազեցվի: Տեղյակ եք, որ կառավարության միջնաժամկետ ծախսային ծրագրով նախատեսված է դեֆիցիտի աստիճանական նվազեցման քաղաքականություն: ՀՆԱ-ի նկատմամբ այս տարվա դեֆիցիտը 6 տոկոս էր նախատեսված, իսկ 2011-ին ծրագրված է 3,95 տոկոս: Գումարային առումով եթե 2010-ին ունենք 193 մլրդ դրամի դեֆիցիտ, ապա 2011-ին նախատեսվում է 148 մլրդ դրամ:

- Սակայն այս տարի պետբյուջեի եկամուտները նախատեսվածից ավելի են հավաքվում: Հետեւաբար այս տարվա փաստացի դեֆիցիտի նկատմամբ եկող տարվանն ինչպիսի՞ն կլինի:

- Այս տարի սպասվող դեֆիցիտը կլինի մոտ 4,7 տոկոս: Հետեւաբար, անգամ սպասվող փաստացի դեֆիցիտի համեմատ 2011-ին դեֆիցիտը կկրճատվի:

- Բյուջեի ծախսերը որո՞նք են կազմելու, եւ գերակայությունները որո՞նք են լինելու:

- Ծախսերը կկազմեն 998 մլրդ դրամ: Ինչ վերաբերում է գերակայություններին, ապա դրանք մեր երկրի համար այնպիսին են, որ իշխանության ղեկին գտնվող ոչ մի քաղաքական ուժ դրանք չի փոխի, քանի որ մենք դատապարտված ենք ունենալ այդ գերակայությունները: Մասնավորապես, երկրի պաշտպանության եւ սոցիալական ոլորտները դեռ երկար ժամանակ լինելու են մեր գերակայությունները:

Տես էջ 8

Հայ 20-ամյա հովվին գտել են կախված Քաֆվի բանտում

Հ. ԱՓՅԱՆ

Հոկտեմբերի 5-ին՝ գիշերվա ժամը 3-ին, ադրբեջանական կալանատան իր խցում ինքնասպան է եղել Մանվել Մամիկոնի Սարիբեկյանը, որը, ինչպես հաղորդում են ադրբեջանական աղբյուրները. «Ձերբակալվել է սեպտեմբերի 11-ին, հայ-ադրբեջանական ռազմաճակատի հյուսիսարեւելյան մասում, երբ ադրբեջանական կողմը դիմագրավել է հայկական դիվերսիոն խմբի հարձակմանը»: Ադրբեջանական կայքը նաեւ մեջբերում է այդ երկրի պաշտպանության նախարարության ու գլխավոր դատախազության հաղորդագրությունը. «Սարիբեկյանը ինքնասպանություն է գործել՝ կախվելով սավանի միջոցով: Նրա դին դատաբժշկության ենթարկելիս որեւէ այլ տեսակի մարմնական վնասվածքներ չեն հայտնաբերվել»:

Հենց սկզբից նկատենք, ցավալի է, երբ հարեւան երկրի լրատվամիջոցը հայ-ադրբեջանական սահմանն անվանում է «ռազմաճակատ»: Հիշեցնենք, սեպտեմբերի 12-ին «ձերբակալվել է հայ դիվերսանտ» բղավելով նաեւ նշեցին, որ Սարիբեկյանը ձերբակալվել է իբր թե ղարաբաղա-ադրբեջանական սահմանում: Սրանից անմիջապես հետո ԼՂՀ ՊԲ-ն հաղորդագրություն տարածեց, որ «Սարիբեկյան Մանվել Մամիկոնի անվամբ զինծառայող ԼՂՀ-ի այդ հատվածում առհասարակ չկա»: Ավելին, ադրբեջանական լրատվամիջոցների նշած հատվածը հենց այն ուղղությունն է, որտեղ հունիսի 18-ին, օգոստոսի 31-ին եւ սեպտեմբերի 4-ին ադրբեջանական կողմը իրականացրել է դիվերսիոն հարձակումներ:

Ամեն ինչ պարզվում է հետեւյալից՝ սեպտեմբերի 13-ին Գեղարքունիքի մարզի ոստիկանության Ճամբարակի բաժին է դիմել Թթուջուր գյուղի բնակիչ Սիրանուշ Սերգոյի Բալյանը, որը տեղեկացրել է, որ իր որդին՝ Մամվել Մամիկոնի Սարիբեկյանը (ծնված 27.02.1990), սեպտեմբերի 11-ին, ժ.19.30-ի սահմաններում, անասունները փնտրելու նպատակով դուրս է եկել տնից, գնացել Տավուշի մարզի Քեղուս կոչվող սարամաս, որը գտվում է հայ-ադրբեջանական սահմանագոտում, եւ այլեւս չի վերադարձել:

Տես էջ 8

Կրկին Բրայզայի «գործերից»

Արդեն մեկ տարուց ավելի Քաֆվում ամերիկյան դեսպանի բացակայությունը եւ այդ պաշտոնին Մինսկի խմբի նախկին համանախագահ Մեթյու Բրայզայի հավակնությունները տեւական ժամանակ լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում են: «Ազգը» տեղեկացրել է, որ նախագահ Օբաման հենց Բրայզային նպատակահարմար համարեց Քաֆվում ներկայացնելու ամերիկյան շահերը, մենք նաեւ նշել ենք, որ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը սեպտեմբերի 21-ին 17 կողմ ձայներով ընդունեց Բրայզայի թեկնածությունը, սակայն սենատորներ Մենենդեսն ու Բոխսերը հայտարարեցին, որ վետո են դնում այս թեկնածուի հաստատման վրա:

Երեկ Ադրբեջանում եւ Թուրքիայում ԱՄՆ դեսպանների թեկնածուներ Բրայզայի եւ Ռիկարդոնեի հարցը պետք է վերջնականապես քվեարկվեր Սենատի արդեն լիագումար նիստում: ՀՅԴ Հայ դատի հայաստանյան գրասենյակի ղեկավար Կիրո Մանոյանը, ըստ Panorama.am-ի, նշել է. «Ձայնային քվեարկությունն այն է, որ նախագահողը հարցնում է՝ ովքեր են կողմ, եւ «այո» կամ «ոչ» պատասխանների հարաբերակցությամբ էլ հարցը որոշվում է: Բայց որպեսզի այդ քվեարկությունը տեղի ունենա, սենատորները պետք է միաձայնության գան: Ավանդության վրա հիմնված կարգն այնպիսին է, որ եթե մեկ սենատոր անգամ ասի, որ ինքը համաձայն չէ, որ հարցը քննարկվի, ապա չի քննարկվի»: Մանոյանը նաեւ նշել է, որ ամենայն հավանականությամբ հարցը կմնա Սենատի օրակարգում մինչեւ հունվար, այսինքն՝ մինչեւ Սենատի նոր նստաշրջանի մեկնարկը. «Այդ ժամանակ Սպիտակ տունը կամ կվերանշանակի թեկնածուներին, կամ նոր թեկնածուներ կնշանակի», եզրափակել է Մանոյանը:

Հ. Ա.

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՏՈՐԴԱԿԱՆ

Մեկ տարի՝ ԼՂՀ հարակից տարածքներում

Դաշտային առաքելությունը կիսամեմատի այսօրվա վիճակը 2005-ի փետրվարի հետ

Երեկ եւ այսօր՝ մինչեւ օրվա երկրորդ կեսը, ԵԱՀԿ դաշտային գնահատման առաքելությունը հանդիպումներ է ունեցել Բաքվում: Այդ մասին երեկ Բաքու ժամանումից անմիջապես հետո, ըստ ադրբեջանական ANS PRESS-ի, հայտարարել է ԵԱՀԿ Մինսկի խմբի ֆրանսիացի համանախագահ Բերնար Ֆասիեն:

«Մեր առաքելությունը սկսվում է այսօր», հոկտեմբերի 5-ին Բաքվում ասել է Ֆասիեն, տեղեկացնելով, որ նախ Մինսկի խմբի համանախագահներն ու գնահատման առաքելությանն ուղեկցող ՄԱԿ-ի փորձագետները կհանդիպեն Ադրբեջանի ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովի, ապա նաեւ նախարարության փորձագետների հետ: Հանդիպել են նաեւ փախստականների եւ տեղահանվածների հետ աշխատող ադրբեջանական հանձնաժողովի ներկայացուցիչներին:

Այսօր տեղի է ունենալու առաքելության ներկայացուցիչների հանդիպումը Ադրբեջանի նախագահ Ալիեւի հետ, որից հետո խումբը կժամանի Երեւան: Այստեղ արդեն տեղի ունենա հանդիպում Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հետ, որից հետո՝ հոկտեմբերի 7-ին խումբը կմեկնի Ստեփանակերտ: «Եղանակային պայմաններից ելնելով՝ առաքելությունը ծրագրվում է ավարտել հոկտեմբերի 13-ին կամ 14-ին», ասել է Ֆասիեն:

Անդրադառնալով հենց բուն առաքելությանը՝ Ֆասիեն ընդգծել է դրա կարեւորությունը, նշելով, որ նմանօրինակ առաքելություն իրականացվել էր դեռեւս 2005-ի փետրվարին, որից հետո անցած հինգ տարիների ընթացքում կատարվածը առաքելության մասնակիցները կհամեմատեն 2005-ի տվյալների հետ:

Ֆասիեն փորձել է պարզաբանել, թե ինչու առաքելության ներկայացուցիչները չեն անցնում ԼՂՀ հարակից տարածքներ ադրբեջանական կողմից, ինչպես տեղի ունեցավ համանախագահների վերջին տարածաշրջանային այցի ժամանակ: Ֆասիեի խոսքերով, «Վերջին 9 տարում առաջին անգամ մեզ հաջողվեց փման գիծն անցնել ադրբեջանական կողմից: Անցյալ տարի նախագահների բազմաթիվ հանդիպումներ եղան, այս տարի բանակցությունները դժվար են առաջ գնում», ասել է Ֆասիեն եւ ավելացրել. «Չնայած դրան, մենք ուզում ենք ցույց տալ, որ զորքերի փման գծում չպետք է երկաթե վարագույր լինի, եւ համանախագահները կարող են ցանկացած երթուղի օգտագործել»:

Այդուհանդերձ, քանի որ գնահատման առաքելության կազմում կան նաեւ այլ մասնակիցներ, բացի համանախագահներից, որոշվել է այս անգամ Ղարաբաղ հասնել հայկական կողմով: «Սակայն ուզում եմ նշել, որ մեր այցելությունը Լեռնային Ղարաբաղ ադրբեջանական կողմով վերջին անգամ չէ, որ իրականացվում է: Եվ որպեսզի դրան վկա լինենք հերթական անգամ, հարկ չի լինի սպասել եւս 9 տարի», թերեւս հույս, այլ ոչ թե վստահություն է հայտնել Բերնար Ֆասիեն:

Ինչ վերաբերում է Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների՝ դեկտեմբերին Ասանայում կայանալիք ԵԱՀԿ գագաթաժողովի շրջանակներում հանդիպման հավանականությանը, ապա Ֆասիեն նշել է, թե մինչեւ դեկտեմբեր բավականին ժամանակ կա, թեեւ դեռ վաղ է խոսել հանդիպման լինելիության մասին:

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հ. Գ. Երեկ Նախիջեւան էր այցելում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը: Նա հանդիպել է Նախիջեւանի կառավարության անդամների հետ եւ մասնակցել Նախիջեւանը Թուրքիային կապող Նախիջեւան-Սադարակ ավտոմայրուղու բացմանը:

Եվս մեկ վկայություն՝ կոնգրեսական տարեգրություններին

Հավատարիմ մնալով հայերի դեմ գործված ցեղասպանության ճանաչման հասնելու գործընթացին եւ այդ առթիվ մշակված ծրագրին, նաեւ հարգելու հիշատակը մեկուկես միլիոն անմեղ զոհերի, ԱՄՆ-ի կոնգրեսական Ադամ Շիֆը կոնգրեսական տարեգրությունների համապատասխան բաժնի պատասխանատուներին հոկտեմբերի 4-ին հանձնել է Եղեռնից մազապուրծ Գեւորգ «Ջորջ» Հաֆալմազյանի պատմությունը՝ որպես վկայություն կատարվածի: Ընդամենը մի քանի օր առաջ Շիֆը նույն բաժնին էր հանձնել Արամ Դեմիրճյանի հոր պատմությունը:

Հ. Ծ.

«Քահելին, նամազ անելով Անիի տաճարում, օրակարգում կմնա, բայց հազիվ թե քվե վաստակի»

Միանշանակ չեն Ազգայնական շարժում կուսակցության առաջնորդի ուրբաթօրյա նամազի արշագամները Թուրքիայում

Հ. ՉԱՔԲՅԱՆ

Որքան էլ շահադիտական նպատակներ հետապնդի, այնուամենայնիվ, վարչապետ Էրդողանի կառավարության թույլտվությամբ, օգոստոսի 15-ին 88 տարվա ընդմիջումից հետո Տրապիզոնի հույն ուղղափառ եկեղեցու Սումելա վանքում, իսկ սեպտեմբերի 19-ին՝ 95 տարվա ընդմիջումից հետո Վանա լճի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցում մատուցվեց պատարագ, որն աննախադեպ էր Քեմալ Աթաթուրքի հիմնադրած ժամանակակից Թուրքիայում:

Մինչ ուլտրազգայնամոլ «Մեծ միասնություն» կուսակցությունը փորձում էր Սումելա վանքում մատուցված պատարագը հակադարձել Կ. Պոլսո Այա Սոֆիայի տաճարում նամազ անելով, հոկտեմբերի 1-ին՝ Թուրքիայի ազգային մեծ ժողովի նստաշրջանի բացման օրը, «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպության Ազգայնական շարժում կուսակցության նախագահ Դեւլեթ Բահչելին ուրբաթօրյա նամազի կանգնեց Անիի հայոց Սուրբ Աստվածածին մայր տաճարում, որ հակադարձի Սուրբ Խաչի պատարագը:

Հայաստանյան լրատվամիջոցները բուռն հակազդեցությամբ արձագանքել են Բահչելիի նամազին: Դա իրավացիորեն քաղաքական սադրանք է որակել Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը: Անկախ թուրք հասարակության ենթագիտակցության մեջ ամրագնդված հայատյացությունից ու հայերի եւ Հայաստանի նկատմամբ Թուրքիայի որդեգրած թշնամական քաղաքականությունից, երկրում ամենեւին էլ միանշանակ չէր մոտեցումը Բահչելիի նամազին:

Համենայն դեպս, հոկտեմբերի 3-ին նամազի համար Բահչելիին քննադատեց վարչապետ Էրդողանը, որին հաջորդ օրը քննադատությամբ միացավ թուրք իսլամականների խոսափող «Վաքիթ» թերթի առաջատար լրագրող Աբդուռահման Դիլիփաքը՝ համարելով նրա նամազը կրոնի քաղաքական նպատակներով շահարկման դրսեւորում:

Տես էջ 4

ԼՂՀ ճանաչման օրինագիծը ներկայացվեց՝ չներկայացվելու նման

Երեկ Ազգային ժողովում ներկայացվեց «Ժառանգության» նախագիծը, որով առաջարկվում էր ճանաչել ԼՂ Հանրապետությունը: Նախագիծը ներկայացնող **Ռաֆֆի Հովհաննիսյանն** այն իրավական, իրավաբարոյական անվանեց եւ անցյալի սխալները սրբագրելու, առաջ նայելու տեսանկյունից՝ համազգային հրամայական. ճանաչելով ԼՂՀ-ն՝ ինքնիշխան Հայաստանը պետք է բացահայտի իր հաղթականությունը, դնի Հայաստան-ԼՂՀ հարաբերությունների իրավական, բարոյական, քաղաքական հիմքը:

Օրինագիծը երկար ժամանակ օրակարգում չէր հայտնվում, քանի որ ԱԺ մեծամասնությունը համարում էր, որ պահը չէ, ու այս անգամ եւս համարում էր, որ պահը չէ, քանի որ կարող է խանգարել Մինսկի խմբի ձեւաչափով ընթացող բանակցային գործընթացին: Սակայն օրինագծի հեղինակ Ռ. Հովհաննիսյանի կարծիքով՝ այդպիսի ռիսկեր ճանաչումը չի կարող պարունակել, հակառակը, ուշացել են, եւ դա դեռ պետք է անեին 1994 թվականին: Երբ օրինագծի հեղինակի ելույթն ավարտվեց, ԱԺ փոխնախագահ **Սամվել Նիկոյանը** հիշեցրեց պետության, խորհրդարանական մեծամասնության, ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի դիրքորոշումների մասին («պա՛հը չէ»), այդ դեպքում ի՞նչ է ակնկալում «Ժառանգությունն» այս օրինագիծն արտահերթ մտցնելով օրակարգ: Ակնկալիքը միասնականության հույսն էր, ընդդիմության նախաձեռնության կարեւորումը:

Սակայն «Ժառանգությանը» վիճակված էր մենակ մնալ, ու թեեւ ՀՅԴ-ի տեսակետը եւս նախապես հայտնի էր՝ «ժամանակը չէ», այնուամենայնիվ՝ եթե օրինագիծը հասներ քվեարկության, ըստ Վահան Հովհաննիսյանի, այսպիսի օրինագծին դեմ քվեարկել չէր լինի՝ ՀՅԴ-ն կողմ էր քվեարկելու: Միայն **Տիգրան Թորոսյանն** էր, որ լիարժեք կողմ էր նախագծին, բացի ժառանգականներից, Հայաստանի կողմից ԼՂՀ ճանաչման մեջ վտանգներ չտեսնելով: Նա գտնում էր, որ առաջին քայլը հենց Հայաստանը պետք է անի այդ ուղղությամբ, չնայած նաեւ առաջարկեց, որ քվեարկություն չլինի, նախագիծը հետաձգվի ու նրա վրա աշխատանք տարվի: Նա նորից խոսեց այն մասին, որ ինքնորոշվող ժողովուրդը ԼՂՀ ժողովուրդն է, իսկ ճանաչումը երկարատեւ եւ բարդ գործընթաց է, դրա վերաբերյալ պոպուլիստական մեթոդներն ընդունելի չեն, Հայաստանն առհասարակ պետք է դրա վերաբերյալ ծրագիր ունենա, իսկ մարդիդյան սկզբունքներից ինքնորոշման սկզբունքով ԼՂՀ-ն պետք է բանակցային կողմ լինի:

Բայց հերթականություն պահենք, քանի որ միեւնույնն է, բոլոր մյուս ելույթ ունեցողները, ներառյալ խմբակցությունների տեսակետները, դեմ էին եթե ոչ նախաձեռնությանը, ապա գոնե դրա քվեարկությանն այս պահին, համարյա միեւնույն պատճառաբանությամբ՝ դա հայտնի ուժերի շահարկմանը կբերի, կխանգարի բանակցային գործընթացին Մինսկի խմբում, եւ առհասարակ այս պահին վտանգավոր հետեւանքների կարող է բերել՝ գոնե քվեարկության օրինագիծը պետք չէ հասցնել: Այդ տեսակետին էր ԱԺ արտաքին հարաբերությունների անդամ, հարակից զեկուցող **Շիրակ Թորոսյանը** («Դրա ժամանակը չէ, Մինսկի խմբի ձեւաչափը սպառված չէ»), ԱԳ փոխնախարար **Շավարշ Քոչարյանը** (աննպատակահարմար է), **Արա Սիմոնյանը**՝ Արարատ Գեղամյանի կուսակիցը («Ձո՞ւր են լցնում Ադրբեջանի եւ Թուրքիայի ջրաղացին, Մինսկի խմբի գործընթա՞ցն ել ուզում վիժեցնել»), ՕԵԿ-ի տեսակետը ներկայացնող **Հովհաննես Մարգարյանը** («ժամանակավրեպ է, թեեւ նախաձեռնությունն ընդհանրապես ողջունելի է»): Շավարշ Քոչարյանը պարզաբանեց, որ ԼՂՀ ճանաչումը մնում է Հայաստանի քաղաքական օրակարգում, բայց այդ պետք է արվի այնպիսի մի ժամանակ, երբ դա առավելագույն արդյունք կտա:

Օրինագծին կողմ ժառանգականները փորձում էին իրենց հարցերի պատասխանը ստանալ. «Ե՞րբ է ժամանակը» (**Սյոնպա Սաֆարյան**), «Երբ կգա՝ կասեմ» (Շ. Թորոսյան), ճիշտ է, ավելի ուշ բացատրեց՝ երբ սպառվի Մինսկի խմբի ձեւաչափը: «Ադրբեջանի ռազմատենչ կեցվածքը սպառնալիք չէ՞ Մինսկի խմբի ձեւաչափին» (**Լարիսա Ալավերդյան**): «Հայեցակարգ ունե՞նք ԼՂՀ հարցում» (**Ռուզան Առաքելյան**, բայց նա ՀՅԴ-ից էր). չունենք, բայց մարդիդյան սկզբունքները կան՝ Շ. Քոչարյանը նշեց դրանցից երեք հայտնի սկզբունքները հայեցակարգի տեղ: **Արամ Սաֆարյանը** ԲՀԿ-ի անունից տարածություն ուներ օրինագծի հեղինակի հետ մարտավարական հարցերում միայն, ռազմավարական հարցերում՝ ոչ. Հայաստանը Մինսկի խմբի ձեւաչափում պետք է աշխարհի ուժային կենտրոններին համահունչ մասնակցություն ունենա, մի խոսքով՝ այս պահին այս նախաձեռնությունը չի նպաստում բանակցային գործընթացին:

Գալուստ Սահակյանը ՀՀԿ անունից հորդորեց. «Չխափանենք մեր խաղաղ գործընթացները, մենք շահեկան վիճակներ դեռ շատ կունենանք, բավարարվենք քննարկմամբ եւ չքվեարկենք...»:

Վահան Հովհաննիսյանն արդեն խմբակցության անունից ավելի շուտ խոսեց այն մասին, որ պետք է դաս քաղել ընդդիմության եւ մեծամասնության փոխադարձ անհանդուրժողականության եւ անհասկացողության հետեւանքով այս օրինագծի խորհրդարանում հայտնվելով՝ հետեւանքները շուտով կտեսնենք, հատկապես Ադրբեջանի կողմից քարոզչական նպատակով օգտագործման տեսակետից, ինչը չէր կարելի, եւ երկու կողմն էլ դրանից թող հետեւություններ անեն: Նա առաջարկեց այս պահին ճանաչել ոչ թե ԼՂՀ-ի, այլ Ադրբեջանի անկախությունը՝ իր ներկա սահմաններով եւ ստացավ Շ. Քոչարյանի քաջալերանքը:

Մինչեւ Ռաֆֆի Հովհաննիսյանի եզրափակիչ ելույթը կառավարության նիստերի դահլիճում ընթացող նիստի ընթացքում նրան մոտեցավ Ազգային ժողովի նախագահը, որը հավանաբար համոզում էր օրինագծի քննարկումով սահմանափակվել եւ քվեարկության պահանջ չհնչեցնել: Այդպես էլ եղավ՝ Ռ. Հովհաննիսյանը, թեեւ համոզված էր, որ օրինագծի ընդունումը չի կարող խափանել բանակցային գործընթացը, սակայն տեղի տվեց. ողջ ազգից զորակցություն հայցելով իր նախագիծը համազգային դարձնելու առումով՝ նա քվեարկությունը հետաձգեց մինչեւ հաջորդ քառորյա:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ծխախոտը կթանկանա՞

Ազգային ժողովում երեկ քննարկվող օրինագծերից մեկը՝ «Ակցիզային հարկի մասին» օրենքի փոփոխությունների ու լրացումների նախագիծը, բավական թեժ հակադարձումների արժանացավ պատգամավորների կողմից: Ըստ կառավարության այս նախաձեռնությունը ներկայացնող Սուրեն Կարայանի՝ հիմնական փոփոխություններն իրականացվում են երեք ադրանքատեսակների՝ սպիրտային խմիչքների, բենզինի եւ դիզվառելիքի հարկման ռեժիմների փոփոխության ուղղությամբ: Փոփոխության իմաստն այն է, որ հաստատագրման ռեժիմից կառավարությունն ուզում է անցնել հարկման ընդհանուր համակարգի, այսինքն՝ ըստ տնտեսական գործունեության արդյունքի հարկման, որը, ըստ նախագծի հեղինակների, ավելի արդարացի հարկում է՝ ի տարբերություն հաստատագրված վճարների. որքան շատ արտադրանք ունենա, այնքան շատ կհարկվի, կոնկրետ քանակից է կախված հարկման չափը:

Ըստ ֆինանսների փոխնախարար Սուրեն Կարայանի՝ միջին արժեքը եւ թանկարժեք ծխախոտը կթանկանան 10-15 դրամով: Փոփոխություններն արժանացան հակադարձության՝ Կարեն Վարդանյանը նկատեց, որ սա կբերի թանկացումների ոչ թե 10-15 դրամով, այլ մանրածախ ոլորտում՝ 25-30 դրամով, ինչն իր կողմից կարող է բերել աշխատատեղերի կորստին, ներքին արտադրողների արտադրական ծավալների կրճատմանը, մի խոսքով՝ տեղական արտադրողին խեղդելուն: Այս օրենքի առաջին եւ երկրորդ ընթերցումները առաջարկվում էին 24 ժամում կազմակերպել, հրատապության կարգով. սա եւս կրճատ բորբոքեց. «Անցած ուրբաթ այդպիսի բան չէր ասվում, ի՞նչ պատահեց մեկ գիշերում մեր արտաքին տնտեսական հարաբերություններում», հարցրեց Արա Նռանյանը, իսկ Վահան Հովհաննիսյանն այս օրենքը բացահայտորեն համարեց արտաքին տնտեսական ճնշումների (ռուսական) արդյունք: Արմեն Մարտիրոսյանին հետաքրքրում էր, թե հաշվարկվա՞ծ են այդ քայլի քաղաքական հետեւանքները: Հարակից զեկուցող, գլխադասային հանձնաժողովի նախագահ Վարդան Այվազյանը կրկնեց հնչող հարցը՝ կա՞ արտաքին ճնշում, եւ պատասխանեց, թե մեր պետությունը ե՛ւ պարտավորություններ, ե՛ւ իրավունքներ ունի՝ թե արտաքին, թե՛ ներքին շուկայում հավասար կարգավիճակում գտնվելու անհրաժեշտություն կա: Այս հարցին դեռ կանդրադառնանք, օրենքը դեռ քննարկվում է:

Մ. Ք.

Յանուկովիչը մեծ կարեւորություն է տալիս Հայաստանի հետ համագործակցությանը

Նախագահ **Սերժ Սարգսյանին** երեկ իր հավատարմագրերն է հանձնել Հայաստանում Ուկրաինայի նորանշանակ դեսպան **Իվան Կուխտան**:

Պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ նախագահ Սարգսյանը նշել է, որ Հայաստանն անկեղծորեն հետաքրքրված է Ուկրաինայի հետ հարաբերությունների առավել ամրապնդմամբ եւ համագործակցության զարգացմամբ: Նախագահի հավաստմամբ՝ այդ հարաբերությունների սերտացման համար իրավապայմանագրային անհրաժեշտ դաշտն արդեն ձեւավորված է, եւ նպաստավոր պայմաններ են ստեղծված երկու երկրների փոխգործակցության ընդլայնման համար:

«Ուկրաինայում այժմ տնտեսական եւ քաղաքական լուրջ բարեփոխումներ են ընթանում: Նախագահ Յանուկովիչը մեծ կարեւորություն է տալիս Հայաստանի հետ Ուկրաինայի համագործակցության խորացմանն ու հարաբերությունների առավել ամրապնդմանը», ասել է դեսպան Կուխտան:

Երկուստեք կարեւորվել են տնտեսական, մշակութային, հումանիտար, միջտարածաշրջանային եւ մի շարք այլ ոլորտներում փոխգործակցությունը, երկու երկրների գործարարների շփումների ակտիվացումն ու այդ նպատակով գործարար համաժողովների անցկացումը:

Ա. Հ.

Հոգեւոր հովիվների նշանակում Հայ եկեղեցու թեմերում

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությամբ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում ծառայող երեք եկեղեցականներ իրենց հոգեւոր ծառայությունը կշարունակեն Հայ եկեղեցու տարբեր թեմերում:

Հոկտեմբերի 1-ից Վարդ քահանա Գյոզալյանը եւ Առաքել քահանա Վարդազարյանը նշանակվել են ԱՄՆ Հայոց արեւելյան թեմ, իսկ Սերոբ սարկավագ Հովհաննիսյանը՝ Գերմանիայի Հայոց թեմ՝ թեմական առաջնորդների իշխանության ներքո:

Մ. Մ.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Այլատյացությունը՝ պետական քաղաքականություն Ադրբեջանում

«Ի՞նչ անել, երբ օտարատյացությունը երկրի պետական քաղաքականություն է, որը խրախուսվում է երկրի առաջին դեմքերի մակարդակով», ԵԽԽՎ-ում ծայրահեղականության դեմ զեկույցի առնչությամբ արձագանքել է հայասանյան պատվիրակության անդամ Նաիրա Զոհրաբյանը:

Նրա խոսքերով, իրապես ողջունելի է ռասիզմի եւ անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի առաջարկությունը, ըստ որի՝ քաղաքական կուսակցությունների եւ ազգային խորհրդարանների կողմից պետք է առաջադրվեն ինքնակարգավորվող մեխանիզմներ՝ նպատակ ունենալով պատժել կուսակցությունների այն անդամներին կամ պատգամավորներին, որոնք տարածում են ռասիզմ եւ օտարատյացություն:

Զոհրաբյանն իր եվրոպացի գործընկերներին օրինակներ է ներկայացրել Ադրբեջանից, որտեղ հայատյացությունը երկրի արտաքին քաղաքական գերակայություններից մեկն է: Ըստ Զոհրաբյանի, «Ադրբեջանում մարդկանց սպանում էին միայն այն բանի համար, որ նրանք հայ են: Ի՞նչ է սա, եթե ոչ ռասիզմ եւ օտարատյացություն: Ի՞նչ հանդուրժողականության մասին կարող է խոսք լինել, երբ օրերս Ադրբեջանի «Հանրապետական այլընտրանք» քաղաքացիական նախաձեռնության ղեկավար Իլգար Մամեդովը հայտարարում է, որ իր երկրում երիտասարդության մեծ մասը, որը անգամ չի էլ տեսել ղարաբաղյան պատերազմը, այսօր գտնում է, որ Ղարաբաղի հարցը պետք է լուծել ռազմական ճանապարհով»:

Զոհրաբյանի խոսքերով, պատահական չէր, որ ժամանակին ՄԱԿ-ի ժնեւյան գրասենյակում Ադրբեջանի մշտական ներկայացուցիչ Վագաբզադեն 2001-ին երկրի խորհրդարանի նախագահին ուղղված նամակում նշել էր, որ «կան ադրբեջանցի բազմաթիվ դիվանագետներ, որոնց արյան մեջ օտար արյուն կա, որոնց մայրերը հայ են, ռուս կամ հրեա, թե նման դիվանագետները չեն կարող հավատարիմ ծառայել Ադրբեջանին»:

2003 թվականին ԵԽԽՎ նախագահն ու Եվրոպական խորհրդարանի նախագահը ստորագրեցին «Հանուն ոչ ռասիստական հասարակության» եվրոպական քաղաքական կուսակցությունների խարտիան, որը, ըստ Զոհրաբյանի, ազգային խորհրդարանների մակարդակում շարունակություն չունեցավ: Նրա խոսքերով՝ «Քանի դեռ եվրոպական մեր ընտանիքում կա երկիր, որտեղ մարդու կարող են սպանել միայն այն բանի համար, որ նա այլազգի է, մենք խորհելու եւ հետեւություններ անելու շատ բան ունենք»:

Ա. Հ.

Վախճանվեց Ռաֆայել Պապայանը

Հոկտեմբերի 4-ին իր տանը վախճանվել է ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ Ռաֆայել Պապայանը: 68-ամյա քաղաքական գործչի ներդրումը գնահատելի է հայոց պետականության եւ անկախության ձեռքբերման գործում:

Ռաֆայել Պապայանի մահվան կապակցությամբ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի որոշմամբ ստեղծվել է կառավարական հանձնաժողով՝ ՀՀ ՍԴ նախագահ Գագիկ Հարությունյանի գլխավորությամբ:

Ռաֆայել Պապայանի հոգեհանգիստը տեղի կունենա հոկտեմբերի 6-ին, ժամը 18.00-ից, Երեւանի Սուրբ Հովհաննես եկեղեցում (Կոնդ, Կոզեռնի 15 հասցեում), հուղարկավորությունը՝ հոկտեմբերի 7-ին, ժամը 14.00-ին նույն տեղից:

Ռ. Պապայանը բազմաթիվ գրքերի ու հոդվածների հեղինակ էր: Հոդվածներ է ստորագրել նաեւ մեր թերթում:

Մեր ցավակցությունները հարազատներին եւ գործընկերներին:



«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանում երդվեցին ադագա մանկավարժները

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) առաջին կուրսեցիների երդման ավանդական արարողությունը տեղի ունեցավ երեկ Խ. Աբովյանի տուն թանգարանում: Ակնավոր գրողի տուն-թանգարանում մանկավարժական համալսարանի առաջին կուրսեցիների երդման արարողությունը շուրջ 40 տարվա պատմություն ունի: Երեկ հանդիսավոր արարողության ժամանակ երդվեցին առաջին կուրս ընդունված ադագա մանկավարժները: Նրանց շնորհավորեց **Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը**, որը ուսանողներին փոխանցեց նաեւ Վեհափառ հայրապետի օրհնությունը: «Մեր փափագն է, որ հավատարիմ մնաք ձեր երդմանն ու արժանի լինեք ձեր փափագին: Կրկին ընդունեք Վեհափառ հայրապետի շնորհավորանքները», ասաց Անուշավան սրբազանը: Ադագա մանկավարժներին շնորհավորեց եւ հաջողություն մաղթեց նաեւ ՀՊՄՀ-ի ռեկտոր **Ռուբեն Միրզախանյանը**: «Մեծ ուրախության օր է այսօր: Մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի անունը կրող համալսարանական ընտանիքն ավելացել է 1440 անդամներով: Լինենք հպարտ եւ պատասխանատու այն մեծ գործերի համար, որոնք պապասում են մեզ, քանզի մեր համատեղ աշխատանքի հաջողությամբ է պայմանավորված վաղվա ազգային դպրոցի հաջողությունը», ասաց Ռուբեն Միրզախանյանը: Ռեկտորի փոխանցմամբ՝ Մանկավարժական համալսարանը վերջին տարիներին մեծ հաջողություններ է հասել: ՀՊՄՀ-ն ուսանողների թվաքանակով այսօր երկրորդն է Հայաստանում: «Մանկավարժական համալսարանն ունի ավելի քան 15 հազար ուսանող, ինչը արդյունքն է այն հետեւողական ու որոշակի աշխատանքի, որն իրականացրել է համալսարանի դասախոսական կազմը՝ գլխավորությամբ մեծարգո պրոֆեսոր Արսյուշա Ղուկասյանի: Ցանկանք նրան առողջություն եւ այսօր՝ այս հանդիսավոր օրը հավատիացնենք, որ ամեն դրականն ունենալու է իր հետագա զարգացումը», ասաց Ռուբեն Միրզախանյանը:

Առաջին կուրսեցիների համար ՀՊՄՀ-ի ավելի բարձր կուրսերի ուսանողները համերգային ծրագիր էին պատրաստել: Առաջին կուրսեցիներին շնորհավորելու էր եկել նաեւ Հայաստանի ժողովրդական արտիստ **Ջիվան Գասպարյանը**, որը հանդես եկավ երաժշտական փոքրիկ կատարումով:

Առաջին կուրսեցիներից շատերն առաջին անգամ էին Խ. Աբովյանի տուն-թանգարանում եւ մեծ ոգեւորությամբ նրանք շրջեցին սրահներում: Օտար լեզուների ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողուհի **Նելլի Խաչատրյանը**, ճիշտ է, մի ամիս է ինչ սովորում է ՀՊՄՀ-ում, բայց շտապում է հայտնել իր գոհունակությունը. «Վստահ եմ՝ մեր դասախոսների շնորհիվ անպայման լավ մանկավարժ կդառնամ»: **Մերի Հակոբյանն** էլ սովորում է կուլտուրայի ֆակուլտետում, հեռուստառեժիսուրայի բաժնի առաջին կուրսի ուսանողուհի է: «Շատ եմ սիրում իմ ընտրած մասնագիտությունը, որը թույլ է տալիս հասնել անգամ հոլիվուդյան աստիճանի: Քիչ տեղերում կարող ենք հեռուստառեժիսուրա սովորել, եւ կուլտուրայի ֆակուլտետն այդ փոքր տեղերից մեկն է», ասաց Մերին:

Երեկ առաջին կուրսեցիներին շնորհավորեց նաեւ ԱԺ պատգամավոր, մանկավարժական համալսարանի շրջանավարտ **Էդուարդ Շարմազանովը**. «Այսօր շատ կարեւոր օր է ոչ միայն համալսարանի, այլեւ մեր հանրապետության համար, քանի որ 1000-ից ավելի աշակերտներ դարձան ադագա մանկավարժներ: Նրանք ընտրեցին մի մասնագիտություն, որը մասնագիտությունների հիմքն է»:

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը մեր հանրապետության ամենահին կրթօջախներից է: Հիմնադրվել է 1922 թվականին, 2012-ին համալսարանը կնշի իր 90-ամյակը: Համալսարանի գերխնդիրը հանրակրթական դպրոցների համար բարձրորակ ուսուցիչներ պատրաստելն է:

Խ. Աբովյանի տուն-թանգարանի տնօրեն **Հովհաննես Զաքիկյանը** նշեց, որ տուն-թանգարանում մանկավարժական համալսարանի ուսանողների երդման արարողությունն արդեն ավանդական է դարձել, այդ ավանդույթը փոխանցվել է նաեւ դպրոցներին: «Բազմաթիվ դպրոցների այբբենարաններն այստեղ են բաժանվում», նշեց Հ. Զաքիկյանը: Վերջինս նաեւ դասախոսում է ՀՊՄՀ-ում, նրա փոխանցմամբ՝ Խ. Աբովյանի տուն-թանգարանն ու Մանկավարժական համալսարանը ջերմ հարաբերությունների մեջ են: «Մանկավարժական համալսարանը ֆինանսապես օժանդակում է մեզ», հավելեց Հովհաննես Զաքիկյանը:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Լավագույն մանկավարժները գնահատվեցին

Երեկ, «Ուսուցչի օրվա» կապակցությամբ, հանրապետությունում կազմակերպվել են հանդիսություններ եւ միջոցառումներ: Կրթության բնագավառում ցուցաբերած վաստակի եւ երկարամյա մանկավարժական գործունեության համար հանրապետության մի շարք մանկավարժների ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Ազոյանը պատվոգրեր, պարգեւներ ու մրցանակներ է հանձնել: Նախարարը նախարարության «Ոսկե հուշամեդալով» պարգեւատրել է Ջուլիետա Խոյեցյանին (Ազատակի թիվ 1 դպրոց), Թամարա Թովմասյանին (Մարտունու թիվ 2 դպրոց), Գայանե Խանամիրյանին (Գավառի թիվ 3 դպրոց) եւ Սուրեն Սարգսյանին (Արմավիրի թիվ 15 դպրոց): Հանձնվել են մրցանակներ «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն տնօրեն» եւ «Տարվա լավագույն դասատիրակ» անվանակարգերում:

Մ. ՄԱԿԱՐՅԱՆ

«Լավ կինը միշտ ենթարկվում է ամուսնուն, նույնիսկ եթե համաձայն չէ»

Ընտանեկան բռնության պատկերը Արմավիրում

«Կանանց իրավունքների կենտրոնի» եւ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի աջակցությամբ Արմավիր մարզում անցկացվել է սոցհարցում՝ պարզելու մարզում ընտանեկան բռնության պատկերը: Հետազոտությունն անցկացվել է 2009-ի հոկտեմբերից 2010-ի ապրիլն ընկած ժամանակահատվածում Արմավիր քաղաքում եւ մարզի 10 գյուղական համայնքներում: Ուսումնասիրության ընթացքում անցկացվել է 302 դեմ առ դեմ հարցազրույց, հարցաթերթիկները լրացվել են անանունության սկզբունքով: Հարցվածների 42 տոկոսն աշխատում է պետական կամ մասնավոր հասվածներում, 52 տոկոսը տնային տնտեսուհիներ են: Նրանց մեծամասնությունը՝ 82 տոկոս, ամուսնացած է, 6 տոկոսն՝ այրի, 5 տոկոսը՝ ամուսնալուծված: Հարցվածների 11 տոկոսի ընկալմամբ՝ ընտանեկան բռնություն է համարվում միայն հարվածելը, 13 տոկոսի կարծիքով՝ սեռական հարաբերություն պահանջելը նույնիսկ չցանկանալու դեպքում, 3 տոկոսը՝ տեղ գնալու վերահսկումը, 78 տոկոսը ընտանեկան բռնություն է որակում գոռգոռալը, հայհոյելը, ընկերների եւ բարեկամների սահմանափակումը: Հարցվածների 68 տոկոսը նշել է, որ «լավ կինը միշտ ենթարկվում է ամուսնուն, նույնիսկ համաձայն չլինելու պարագայում»: 19 տոկոսն էլ նորմալ երեւույթ է որակում, երբ ամուսինն արգելում է կնոջն աշխատել:

Հարցված կանանց 68 տոկոսը ենթարկվել է հոգեբանական, իսկ 38 տոկոսը՝ ֆիզիկական ճնշման: Հոգեբանական ճնշման միջադեպերի 64 տոկոսի դեպքում բռնարարներն ամուսիններն էին, 18-ի դեպքում՝ սկեսուրները:

«Կանանց իրավունքների կենտրոն» ՀԿ-ի նախագահ **Սուսաննա Վարդանյանի** ներկայացմամբ՝ ընտանեկան բռնությունը մարդու իրավունքների ամենադաժան խախտումն է: Երեւույթի հետ կապված կիրառվում է ՀՀ ՔՕ-ն, սակայն այն կենտրոնանում է բռնության վրա՝ չուսումնասիրելով տեսակը: 2007-ի կատարած ուսումնասիրությամբ՝ 1006 կանանց 27 տոկոսը ենթարկվել է ոչ ծանր բռնության, 12-ը՝ շատ ծանր: Ըստ այդ հետազոտության՝ Հայաստանում 3 կանանցից մեկը ենթարկվում է բռնության:

Հ. Հ.

ԱՆԴՐԱԴԱՐՁ

«Թուրքերը հասկացան, որ Աստծուն խոսք ուղղելու լավագույն վայրը քրիստոնեական տաճարում աղոթք անցկացնելն է»

Սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում Ղուրանի այրումն ու Անիի մայր տաճարում նամազի անցկացումը Մայր աթոռի դիվանապետ **Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը** նույն հարթության մեջ է մեկնաբանում՝ հավելելով, որ երկու դեպքերն էլ ծայրահեղական են եւ կրոնական գաղափարին որեւէ առնչություն չունեն: Գնահատականները նույնն են եւ դատապարտելի: Երբ Ղուրանն էին այրում, մահմեդական աշխարհը ոտքի էր կանգնել ու բողոքի լայնածավալ ակցիաներ էր անցկացնում: Ղուրանի այրումը դատապարտեց նաեւ Մայր աթոռը, մինչդեռ երկու շաբաթվա ընթացքում քրիստոնեական տաճարներում կատարվեցին դատապարտելի ու զարհուրելի իրադարձություններ: Սեպտեմբերի 19-ին Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցում տեղի ունեցավ պատարագ առանց քրիստոնեական տաճարի խորհրդանիշ խաչի, իսկ հոկտեմբերի 1-ին Անիի մայր տաճարում կատարվեց նամազի արարողություն, սակայն քրիստոնյա աշխարհը ոչինչ չձեռնարկեց եւ իր բողոքն ու վրդովմունքը որեւէ կերպ չարտահայտեց:

«**Ազգ**»-ի դիտարկմանն ու հարցին՝ «Ինչո՞վ էր պայմանավորված քրիստոնյա աշխարհի լռությունը», Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը զերծ մնաց մեկնաբանություններից եւ կարծիքներից: Հիշեցնենք, որ Հայաստանյաց առաքելական եկեղեցին Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հիմնադիր անդամ է եւ հայկական կողմի գրագետ աշխատանքի արդյունքում թուրքական կողմի գործողությունները համապատասխան արձագանք կստանային: «Միաժամանակ փորձեցին ժողովրդավար երեւալ եւ ազգային փոքրամասնությունների վերաբերյալ հանդուրժող կեցվածքով ներկայանալ աշխարհին եւ ներքին օգտագործման համար իսլամիստական միտումներին տեղի տալ, որն էլ արտահայտվեց նամազի արարողությամբ»: Եպիսկոպոսը համոզված է. նամազը ոչ թե հոգեւոր բարեպաշտական արարողություն էր, այլ քաղաքական շեշտադրություն պարունակող միջոցառում: Այս խոսքերի հիմնավորումն այն է, որ արմատական իսլամիստները եկեղեցում խուսափում են կրոնական ծես անցկացնելուց: Նույն կերպ որեւէ քրիստոնյա պատարագ չի մատուցում մզկիթում: «Այս կերպ Թուրքիան ցույց տվեց, որ իսլամիստական եւ քրիստոնյա բոլոր կոթողներն իրեն են պատկանում: Բացի այդ, թուրքերը հասկացան, որ Աստծուն խոսք ուղղելու լավագույն վայրը քրիստոնեական տաճարում աղոթք անցկացնելն է»:

Արշակ եպիսկոպոսը համոզված է, որ նամազի արարողությունը որեւէ կերպ պայմանավորված չէ Մայր աթոռի՝ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու պատարագից հրաժարվելուց: Պատարագին Մայր աթոռի նախնական մասնակցությունը եպիսկոպոսը բացատրում է նրանով, որ Թուրքիայում կա 2500 հայկական պատմական հուշարձան, եւ եթե հնարավորություն կա դրանցից մեկը փրկելու ոչնչացումից եւ պահպանելու հետագա սերունդների համար, ապա Մայր աթոռը կգնար այդ քայլին. միակ պայմանը եկեղեցու գմբեթին խաչ տեղադրելն էր, ինչը թուրքական իշխանությունները չկատարեցին:

Այսօր խաչն արդեն տեղադրված է, սակայն Մայր աթոռը չի շտապում պատասխանել արդյոք կմասնակցի՞ Սուրբ Խաչում այլ պատարագների. «Եթե այլ խնդիրներ չծագեն»:

Արշակ սրբազանի մեկնաբանությամբ՝ խաչի տեղադրումը նպատակ ուներ ինչ-որ կերպ մեղմել նամազի ազդեցությունը:

Անդրադառնալով Մայր աթոռի եւ Պոլսի պատրիարքարանի հարաբերություններին՝ Մայր աթոռի դիվանապետն ասաց, որ հարաբերությունները ջերմ ու եղբայրական են, եւ պատրիարքի փոխանորդի ընտրությունները որեւէ ազդեցություն չեն գործել: Ինչ վերաբերում է Վրաստանում հայկական եկեղեցիների խնդրին, սրբազանը տեղեկացրեց, որ հոկտեմբերի 23-28-ը Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը կայցելի Վրաստան: Թեպետ այցի մանրամասնությունների վերաբերյալ առայժմ տեղեկություն չկա, սակայն այցելության հիմնական նպատակներից մեկը Վրաստանում հայկական եկեղեցիների կարգավիճակի եւ հետագա ճակատագրի հարցի քննարկումն է:

ՀԱՄԼԵԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ամերիկացի պատմաբանը սատար է կանգնում «թուրքերի դատին»

Ամերիկացի թուրքամետ պատմաբան Գյունտեր Լեւին, ինչպես երեկ նշել է Նյու Յորքի «Թուրքական» կայքէջը, պատասխանելով լրագրողների «ցեղասպանության հայկական պնդումների դեմ պայքարի» հարցին, հայտարարել է. «Այդ պայքարն իհարկե, տանուլ չի տրված: Սակայն 2015-ին, երբ կլրանա 1915-ի իրադարձությունների 100-ամյակը, պայքարը կբախվի լուրջ դժվարությունների: Համենայն դեպս ես տարելիցի առնչությամբ մտավախություններ ունեմ: Թեեւ հայկական պնդումների դեմ պայքարում մեծ տեղաշարժ է կատարվել, սակայն անելիքները դեռեւս շատ-շատ են: Պայքարի հաջողությունը մեծապես կախված է Թուրքիայի վերաբերմունքից: Կարծում եմ, քանի դեռ ուժի մեջ է 301-րդ հոդվածը, ապա գործերն ամենուրեք կբարդանան, որովհետեւ ձեզ կասեն. «Դուք վախենում եք անաչառ ուսումնասիրությունից: Եվ դա իրավացի կլինի: Որքան էլ կրկնակի վերայանվի 301-րդ հոդվածը, առ այսօր կիրառվում է: Դա Թուրքիայի «դատին» հազիվ թե նպաստի»:

«Ինչպե՞ս եք բնութագրում 1915-ի իրադարձությունները» հարցին ամերիկացի պատմաբանը պատասխանել է հետեւյալ կերպ. «Որքան էլ ես ասեմ, որ դժվար է եւ անհարիր իրադարձությունները իբրեւ ցեղասպանություն բնութագրելը, դրանց բնութագրումը ամենեւին էլ դյուրին չէ: Անձամբ նախընտրում եմ իրադարձությունների բնութագրումը թողնել յուրաքանչյուրի բարոյական եւ իրավաբանական ըմբռնումներին: Առ այսօր չի հաջողվել 15-ի իրադարձությունների վերաբերյալ հավասարակշիռ եւ ճշմարիտ տեսակետ արտահայտել: Իմ կարծիքով հենց դա է բուն խնդիրը»:

Հ. Ղ.

ԱԶԳ Հայաստանի

Պատարագ եւ նամազ՝ հակակշիռ քայլեր

Անիի մայր տաճարին մէջ իսլամական արարողութիւն կատարելը անշուշտ գրգռութիւն է, հոգեւոր արժէքներու ոտնակոխում, սրբապղծութիւն նոյնիսկ: Պահ մը մնանք կրօնական դիտարկումներու համապարունակին մէջ ըսելու համար, որ թուրք ազգայնականներու կատարածը խորին մէջ ուղղուած է ոչ միայն հայ քրիստոնեաներուն դէմ, այլ ընդհանրապէս քրիստոնեայ աշխարհին:

Անկախ այն իրողութենէն, որ հայկական կողմէն համարժէք բողոքի չարժանացաւ պատահածը, պէտք է հաստատել նաեւ քրիստոնեայ աշխարհին կրաւորականութիւնը երեւոյթին նկատմամբ: Համեմատական եզրերը կրնան երեւութապէս շատ մօտ չըլլալ, այսուհանդերձ կարելի չէ չյիշել Քուրանը այրելու սպառնալիքով աշխարհը զբաղցուցած ամերիկացի կրօնական մէկ դէմքին առնելիք քայլին դիմաց բարձրացած աղմուկը նախ անշուշտ իսլամական աշխարհէն, յետոյ նաեւ քրիստոնեայ հասարակութիւններէն եւ կրօնական կեդրոններէն:

Հայկական կողմը մնալով կրօնական դիտարկումներու սահմաններուն մէջ, կրնար քայլ առնել՝ շարժելու համար քրիստոնեայ աշխարհը ի տես այս սրբապղծութեան: Յիշեցնելով, որ հայերը Երեւանի թէ Շուշիի մէջ մզկիթներ կը վերանորոգեն հայկական կրօնական կեդրոնները թէ հասարակական կազմակերպութիւնները ընդգծելիք եւ պահանջելիք շատ կէտեր ունէին քրիստոնեայ աշխարհէն: Եւ ոչ միայն քրիստոնեաներէն, այլ նաեւ իսլամներէն, անոնց ալ յիշեցնելու համար այս բոլորին առընթեր հայկական կրօնական կեդրոններուն ընդվզումն ու դատապարտանքը Քուրան հրկիզելու սպառնալիքներուն դիմաց: Միջին արեւելեան իսլամ ազգաբնակչութիւններուն մօտ առաջադրելի քարոզչաքաղաքական գործողութիւն մը կրնար յանգեցնել իսլամ կարգ մը շրջանակներու առ նուազն անհամաձայնութեան՝ Անիի մայր տաճարին մէջ տեղի ունեցած նամազին ուղղութեամբ:

Թոյլ տպաւորութիւն ձգեց նաեւ Թուրքիոյ սահմանամերձ շրջանին հայկական ցոյց-աղօթք գործողութիւնը, որ յուզախառն զգացակցութեան սահմաններէն անդին չանցաւ: Փաստօրէն, գէթ մինչ այժմ Անիի տաճարին մէջ կատարուածը չունեցաւ հայկական կողմէն համարժէք հակազդեցութիւն:

Փորձենք կատարել արձանագրուածին քաղաքական մեկնաբանութիւնը: Անիի մէջ եղած նամազի լրատուութեան կը զուգադրուի Ախթամարի եկեղեցւոյ գմբէթին խաչ տեղադրելու լուրը: Ուրեմն կ'արձանագրուի իրադարձութիւններու հետեւեալ յաջորդականութիւնը: Պատարագի արտօնութիւն առանց խաչի, ապա խաչի տեղադրում, զուգահեռ՝ Անիի մէջ նամազի արարողութիւն:

Անշուշտ պատահականութեան պէտք չէ վերագրել թրքական կողմէն առնուած քայլերու այս հաւասարակշռութեան խաղը: Ցմոռնանք, որ սահմանադրութեան բարեփոխում եւ Թուրքիոյ եւրոպականացում առաջադրած այսօրուան իշխանութիւնները իսլամական բնութագիրը կը կրեն եւ կրօնական թեմաները լիարժէք կ'օգտագործեն քաղաքական առաւելներ ապահովելու համար: Ներքին-արտաքին շահադիտական մօտեցումներու ընդհանուր շրջածիրին մէջ պէտք է դիտարկել կիրարկուող թրքական խաղը եւ ըստ այնմ քաղաքական գնահատական տալ դիպաշարին:

Պատարագի արտօնութիւնը եթէ դժգոհ կը ձգէ իսլամ զանգուածը, պէտք է պատարագը թոյլ տալ անխաչ գմբէթով: Եթէ խաչի տեղադրումը այս անգամ դժգոհ կը ձգէ թուրք ազգայնականութիւնը պէտք է արտօնել եւ քաջալերել Անիի մայր տաճարին մէջ նամազի արարողութիւնը: Մինչ այդ Եւրոպային ըսել, թէ Թուրքիոյ այսօրուան իշխանութիւնները կը վերանորոգեն հայկական եկեղեցի, կ'արտօնեն պատարագ այնտեղ եւ նոյնիսկ խաչով կ'օժտեն անոր գմբէթը. միւս կողմէ թուրք ազգայնականութիւնը կը համոզեն, որ պատարագի թոյլտուութիւնը անխաչ գմբէթի պայմանով է եւ թէ բացառապէս տարին մէկ անգամուան համար է այդ արտօնութիւնը. իսկ այդ օրէն բացի որեւէ օր բացառուած է այնտեղ աղօթք բարձրացնելը: Թէ՝ իշխանութիւններուն կողմէ արտօնելի է նաեւ հայկական եկեղեցիները իբրեւ մզկիթ օգտագործումը:

Այս բոլորին մէջ կարելի է փորձ կատարել դրական մտորումներ զարգացնելու, եզրակացնելու համար, որ ի վերջոյ հայկական եկեղեցիներ վերանորոգելու շարքի մը կը ձեռնարկուի եւ թէկուզ տարին մէկ անգամուան համար պատարագ կը մատուցուի հայկական սրբավայրերու մէջ: Ցմոռնանք սակայն, որ վերանորոգումներն ու արտօնութիւնները հայկական կողմի նախաձեռնողականութեան հետ կապ չունին: Խաղը կը շարունակուի բացառապէս թրքական կողմի ճշդած կանոններով, թէկուզ միջազգային ընտանիքի ենթադրեալ պարագայական ճնշումներուն տակ: Թերեւս աւելի ճիշդը՝ Թուրքիոյ կողմէ դէպի եւրոպական ընտանիք առնուած քայլերու նկատառումներով:

Կրօնական պիտակներու տակ գործընթացը՝ պատարագով թէ նամազով զուտ քարոզչաքաղաքական թիրախներ կը հետապնդէ: Գործընթացը ճշդուած թիրախներէն շեղեցնելու նախաձեռնութիւներ առ այժմ տեսանելի չեն հայկական կողմէն: Այլապէս, նամազին դիմաց, քրիստոնեայ աշխարհին մօտ ընդվզումի ալիքի բարձրացման նախանշաններ յառաջացնելու հայկական փորձեր զգալի կը դառնային:

ՇԱՀԱՆ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ
«Ազդակ»-ի գլխաւոր խմբագիր

«Բահչելին, նամազ անելով Անիի տաճարում, օրակարգում կմնա, բայց հազիվ թե քվե վաստակի»

1-ին էջից

Հոկտեմբերի 3-ին Ստամբուլում, ելույթ ունենալով «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության վարչության նիստում, Թուրքիայի վարչապետը, թուրքական հանրային հեռուստատեսության վկայությամբ, ասաց. «Ներկա պահին ոմանք հրապարակավ օգտագործելով մասնատում, տարանջատում, դավաճանություն հասկացությունները, խորհրդանիշերն են շահարկում, որ հասարակության բեւեռացման նոր փորձեր կատարեն: Նրանք, ովքեր ասպարեզում մնալու համար շահարկում են ազգային զգացմունքները, մշտապես կորցնելու են... Կուսակցության առաջնորդներից մեկը ելավ-գնաց Անիի ավերակներ: Այնտեղ ուրբաթօրյա նամազ արեց: Թող ընդունելի լինի: Սակայն լավ իմացեք, այն ժամանակ, երբ Անիի ավերակները սրանց մտքով անգամ չէր անցնում, մենք դեռի Անի 42 կմ խճուղի էինք կառուցել»:

Ինչ վերաբերում է Դիլիփպաին, «Բահչելին, իսլամն ու ուրբաթը» վերնագրով «Վաքիթի» հոկտեմբերի 4-ի համարում հրապարակված հոդվածում գրում է. «Այո, Անատոլիան հենց նվաճել ենք, որ պատարագ մատուցվի ինչպես Սումելա վանքում, այնպես էլ Աղթամարի եկեղեցում: Հետաքրքրական է, որ մզկիթի, նվաճումի հարցերում նախանձելի զգայունություն դրսեւորող մեր Բահչելի եղբայրը, չգիտես ինչու, միանգամայն անտարբեր է Երուսաղեմի, Ալ Ամսայի, Պաղեստինի նկատմամբ:

Հարց եմ տալիս. «Ինչո՞ւ ոչ միշտ, այլ տարվա մեջ մեկ օր միայն եկեղեցական արարողություն կատարվի Սումելայում եւ Աղթամարում»: Բահչելին գիտի՞ Ղուրանի «նրանց տաճարները մի յուրացրեք» նախազգուշացման մասին: Առ այսօր ինչո՞ւ է փակ հույն հոգեւոր ճեմարանը: Ինչո՞ւ Տիեզերական չի կոչվում Հունաց պատրիարքարանը: Ինչո՞ւ ասորական, հայկական, հունական եւ հրեական ասվածաբանություն չի դասավանդվում երկրում: Բահչելին տեղյակ էլ չէ Օմար Խալիֆի «Ժառանգականության գրքի» մասին: Ոչ էլ հավանաբար գիտի, որ Ստամբուլի հույն եւ հայ եկեղեցիների պատրիարքարաններն անմիջականորեն գտնվել են սուլթան Մեհմեդ 2-րդի խնամակալության տակ: Լիարժեք կատակերգություն են Ալի Արսլանի ողջ բանակը Անիի ավերակների եկեղեցիներից մեկում տեղակայելու Բահչելիի փորձերը:

Ըստ երեւույթին Բահչելին չի ընկալում նաեւ նվաճումների իմաստը, կարծելով, որ դա սոսկ պատերազմ է, արյունահեղություն: Մի՞թե չկա Ազգայնական շարժում կուսակցության շարքերում մեկը, որ հուշի նրան: Չի կարելի այդ ասիճանի տգեղ լինել, քանի որ Անին նվաճելու արշավի է դուրս եկել, գոնե ճանապարհին փոխեր նաեւ Արզ էր Ռումի՝ Էրզրումի անունը: Սա է գլխավոր խնդիրը, իսկ «Էրգենեֆոնը», սահմանադրական փոփոխությունները դատարկ բաներ են:

Նա Անիի ավերակներում ուրբաթօրյա նամազի կանգնելու միջոցով նախընտրական քարոզարշավն սկսելիս Աղթամարի ժամերգությանն է հակազդո՞ւմ, թե՞ մզկիթի պաշտպանություն կազմակերպում: Ինչո՞ւ Բահչելին նամազն արեց Ֆեթիհյե մզկիթում (Անիի մայր տաճարում), այլ ոչ թե Այա Սոֆիայում... Օրինակ՝ ինչո՞ւ նա ուրբաթօրյա նամազի չի կանգնում Թաքսիմի հրապարակում, որտեղ ֆրանսիական հյուպատոսարանի կողքին թիթեղյա մի նարեթով խրճիթ հիշեցնող մի մզկիթ կա: Նրան նաեւ այնտեղ ենք նամազի սպասում:

Բահչելին Անիից արշավանքի է դուրս եկել, որ վերանվաճի Անատոլիան: Քանի որ հետահայացք անդրադառնում է պատմությանը, հիշեցնենք, որ օսմանյան դինաստիան թուրքերի համար խաֆան, արաբական աշխարհի եւ Պարսկաստանի համար սուլթան, այլ ժողովուրդների համար միապես էր եւ Արեւելյան Հռոմի իրավաժառանգորդը: Այո, Մեհմեդ 2-րդը Հույն ուղղափառ եկեղեցու գլխավորն էր, Հայոց պատրիարքարանի հիմնադիրը, Ասորական եկեղեցու պատրիարքության պահապանը: Լավ կլիներ, եթե Բահչելին իմանար, որ Ստամբուլը նվաճող Մեհմեդ 2-րդի բանակում ոչ մահմեդական զինվորների թիվը ավելի մեծ էր, քան բյուզանդականում: Բահչելին եթե հասարակությանը հաճելի պայծառ մտքեր արտահայտելու փոխարեն ուստեր եւ մի քիչ գիրք կարդար, գուցե կարողանար ավելի լավ բաներ անել: Այսպես վարվելով, նա կարող է մնալ մամուլի օրակարգում, բայց հազիվ թե քվե վաստակի: Ավելի շուտ նա ջուր կլցնի «Մեծ միասնություն» կուսակցության ջրաղացին: Թող շարունակի առաջ շարժվել: Հանկարծ չկանգնի»:

ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ՅԱՎԵՐԸ

Մասնակի «Համահայկականներէն» առաջ եւ ետք, ամբողջականի մը պէտք կայ, թէ՞ ոչ

Հայաստանի Գ. Հանրապետութեան կայացումէն ասդին, «համահայկական» հասկացութիւնը, իր զանազան դրսեւորումներով ու տարատեսակ բովանդակութիւններով, դարձաւ նորանկախ Հայաստանի գործընթացներէն մէկը, յատկապէս հայրենիք-սփիւռք յարաբերութիւնները ամրացնելու, զարգացնելու ու հունաւորելու տեսակէտէն:

Խորհրդաժողովները, գիտաժողովները, համագումարները, համաժողովները, բոլորն ալ «համահայկական» պիտակին տակ, եղան գերազանցապէս «ժամանցի» հաւաքներ ու հանդիպումներ, ծանօթացումի ու մօտեցումի կարգերով, լաւագոյն բացատրութեամբ՝ հայրենասիրական զեղուն զգացումներով, առաւելագոյն արդիւնաւէտութեամբ՝ զբոսաշրջիկական շահաբեր գործարքներով:

Օգտակար էին, թէ՞ ոչ ատոնք, ուրիշ հարց, սակայն ո՞ւր մնացին «համահայկական» կարգախօսներով ճամբայ ելած այդ մեկտեղումները, բացի ճառախօսական, ամբոխավարական ու բեմադրական ելոյթներէն, ուր խօսքերէն անդին ուրիշ ոչինչ չմնաց:

Հաւատալու համար այդ տխուր իրականութեան, կը բաւէ բանալ ատոնց «արխիւները», որոնք կը յիշեցնեն ուռուցիկ-թռուցիկ ելոյթներու պայթուցիկ-ճաքռտիկ փուչիկներու ամբողջ հոսք մը:

Եթէ ճիշդ չեն վերոյիշեալ թւումները կամ ոմանց համար «ծանր» կը նկատուին, ապա փորձ թող կատարուի այդ «համահայկականներուն» գործնական գնահատումը կատարել. ի՞նչ օգտաշատ հետեւանքներ ունեցան, ի՞նչ կառուցողական դերի մէջ գտնուեցան, ի՞նչ դրական ազդեցութիւն գործեցին, իրենց գիտական, մասնագիտական եւ արհեստավարժական առումներով, անշուշտ, յօգուտ հայութեան:

Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները, եթէ պիտի հիմնուին անբեկանելի, այլեւ զարգացող եւ արդիւնաւորուող ազդակներու վրայ, ապա կարելի չէ զանոնք պահել իրենց սովորամոլական, աւանդապաշտական եւ սոսկական արժեչափերով:

«Համահայկականները» եթէ պիտի ըլլան «հնգամեայ փլանի» հասկացողութեամբ, ատոնք ոչինչով կը նպաստեն հայրենիք-սփիւռքի մերձեցումներու նորմալացման, համակարգման ու ներդաշնակման, անցողակի կամ ժամանակաւոր եղելոյթներով ու կայացումներով:

Վերջին հաշուով, պէտք է համոզուիլ (ու համոզել), թէ Հայաստանի մէջ կազմակերպուած որեւէ «համահայկական» նախաձեռնութիւն չի կրնար յաջողութեան հասնիլ զբոսաշրջիկական տրամադրութեամբ, խնամիական կարգով, խաթերական կապով ու պարագայական կարգադրութեամբ:

Նման մթնոլորտ մը ի՞նչ կ'ակնկալուի, եթէ ոչ «ֆոլքլորիկ» ներկայութիւն եւ արտայայտութիւն, իւրաքանչիւր «համահայկականէ» մը ետ հրապարակ նետելով յայտարարութիւն մը, բանաձեւը մը, որ շուտով դատապարտուած է գզրոցներու մէջ տեղաւորեուելու կամ փոշիանալու:

Սխա՞լ են ասոնք:

Իհարկէ՝ ոչ:

Հակաձառութիւն եթէ կայ այս մասին, հեռու զգացական-մակերեսային զեղումներէ, անհրաժեշտ են շօշափելի փաստեր ու խօսուն ապացոյցներ՝ հակառակը հաստատող:

Բայց ինչպէ՞ս կարելի է չհամաձայնիլ այս չոր իրականութեանը:

- Երկար շարանները «համահայկականներու» հազի՞ւ յաջողած են իրենց առաքելութեան մէջ, հազի՞ւ կրցած են իրենց նախատեսութիւնները արդարացնել, հազի՞ւ իրենց շարունակականութիւնը ապահոված:

- «Համահայկականները» եղած են «փլան» կատարելու դիտաւորութեամբ կամ յաջորդականութեամբ, յաճախ «պիւրոկրատական» կարգուսարքով եւ երբեմն ալ ծառայելու ետերու կամ իւրայիններու:

- «Համահայկականները» կայացած են առանց գործնական հետեւանքներու, յաջորդական ծրագրաւորումներու, որոնց նկատմամբ կարելի՞ է տածել վստահութիւն:

Հայաստան-սփիւռք երեք խորհրդաժողովները, օրինակի համար, լաւագոյն ցուցանիշը չե՞ն, որ անոնք անցան «ձայն բարբառոյի» սահմաններէն, առանց հնչուն եւ յուսադրիչ հետեւանքներու, հակառակ զանոնք նախագահող՝ յատենի ՀՀ արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի շռնդալից ու զրնգալից խոստումներուն:

Ուրեմն, ի՞նչ:

Կը նշանակէ, թէ բան մը կար, որ, առնուազն, ճիշդ չէր, պէտք էր սրբագրուէր, բայց մնա նոյն տափակ հորիզոնականին վրայ, գրեթէ նոյն հիւանդութենէն տառապեցնելով մնացած պուճուր թէ մե՞նք «համահայկականները»:

Անցնող մէկ տարուան ընթացքին (եւ մինչեւ օրս), բազմաբդէս «համահայկականներ» եւս կայացան (կը կայանան), որոնք սակայն ինչո՞վ տարբերեցան կամ չնմանեցան նախորդներուն: Ատոնք կը մնան մեծ հարցական նշանի մը տակ:

Հայաստանի գրողներու միութեան համագումարը, որ այսպէս թէ այնպէս «համահայկական» կընկատուի, քանի սփիւռքահայ գրողներ եւս կը հրաւիրուին ու կը մասնակցին անոր, արդեո՞ք կրցաւ դառնալ իր մօտիկ անցեալի հարուստ ժառանգութեան... ժառանգորդը, թէ՞ մնաց իր «հերթականութեան ու հոպանցիկութեան» ոլորտին մէջ:

Այն, ինչ որ կարդացինք ու լսեցինք, պէտ՞ք է յուսադրէ, պէտ՞ք է գոհացնէ, պէտ՞ք է զգաստացնէ մեզ:

«Համահայկականներու» համագումարներու կայացումը, ծաղկաձորեան հրաշագեղութեամբ, հանգստաւէտութեամբ ու յարմարաւէտութեամբ, հոյակա՞պ է, բայց ատո՞նք են հետաքրքրածն ու պահանջուածը (ողորմի՞ այն վաստակաւոր ու տաղանդաւոր գրողներուն, որոնք միայն օդով, ջուրով, փիչիկ մըն ալ... սոխով ու հացիկով սնանուեցան, բայց ամբողջ գրականութիւն մը հաստատեցին ու մշակութային մը կերտեցին):

Շուրջ երկու տարուան կեանք ունեցող ՀՀ սփիւռքի նախարարութիւնը, քառասմբակ թափով կը կազմակերպէ «համահայկականներ», մրցանիշներ կոտրելու արագութեամբ:

Նախարարութիւնն դինամիզմն ու ակտիւիզմը իրա՞ք հրաւալի են, ոմանց համար ալ՝ նախանձելի, բայց մեծ աշուղը ըսած է. «Մէ փիչ կամա՞ գնա, գէօզալ»:

Մենք մեզի իրաւունք կու տանք այսպէս արտայայտուելու, որովհետեւ տիկին Հրանոյշ Յակոբեանը բացառիկ կարողութիւններով եւ անսպառ եռանդով օժտուած պետական գործիչ մըն է: Պէտք չէ իր այդ ունակութիւնները արագօրէն... սպառէ:

Անշուշտ, երբ այս նշումներն ու դիտարկումները կը կատարուին, մեր խօսքը չի վերաբերիր երիտասարդական, մարզական, սկաուտական կամ արուեստագործական «համահայկականներուն», որոնք բացարձակ անհրաժեշտութիւն են, այլ անոնց, որոնք կ'իյնան զուտ ակադեմական, մասնագիտական, արհեստավարժական ու հասարակական ծիրերէն ներս:

Այս բոլորէն կ'առաջանայ բո՛ւն հարցադրումը.

Հայաստան կրնա՞յ իսկական ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ խորհրդաժողով մը կամակերպել, առարկայական շեշտադրումներով եւ իրապաշտ լուծումներով, ուր ազգային հիմնահարցերը լուսարձակի տակ առնուին ու մարտահրաւէրները ճշդուին, որոնցմէ ետք գործի լծուին:

Եթէ այո՛, լաւ սկիզբ մը կրնայ ըլլալ (թէեւ երկա՞ր ճանապարհով), եթէ ո՛չ, ապա «համահայկականները» կրնան նմանիլ երկարաշունչ «մորֆիններու»...

Բայց պէտք է յիշել. ի՞նչն է եւ ո՞րն է մեր ուզածը:

ՊԱՐՈՅՐ ԱՂԱՊԱՇԵԱՆ
Պէյրութ

ԱԶԳ

Միջազգային

Հայկականն ու Հայաստանն իր urտում

Այսպես կարելի է բնութագրել Ամերիկայում ծնված ազգությամբ հրեա այս կենսուրախ, urտաբաց ու զրուցասեր տիկնոջը, որն արդեն 25-րդ (հոբելյանական կարելի է համարել) անգամ է այցելում Հայաստան 1993-ից:

Մեր երկիրը նույնքան հաճախակի այցելած օտարերկրացիների մեջ երեւի կարելի է առանձնացնել բարոնուհի Քերոլայն Քոխսին, որին, ի դեպ, Նյու Յորքում հանդիպել է տիկին Ջիլբերտա Ֆասը մի քանի տարի առաջ, եւ հավանաբար նրանք շատ բան են ունեցել իրար պատմելու հայերի եւ Հայաստանի մասին:

Տիկինը ուղղակի սիրահարված է հայերին, Հայաստանին եւ անշուշտ, հայկական հյուրընկալությանն ու խոհանոցին: Միայնակ երեխա լինելով՝ զրկված է եղել քույր, եղբայր, հարազատ բարեկամներից, եւ 1981-ին, երբ Քենեդու անվան օդանավակայանում հանդիպել է Ռիմա Սահակյանին, որն իր հաստեն տալով հրավիրել է նրան իր տուն, ասելով. «Եթե տանս լույսը վառված տեսնես, զանգը տուր ու բարձրացիր»: Նա զգացել է, որ գտել է իր «հարազատ քրոջը», եւ այդ օրվանից նրա հայկական շրջանակը սկսել է մեծանալ: Ծանոթությունները մեկը մյուսին են հաջորդել: Իր բազմաթիվ ճանապարհորդությունների ընթացքում անձամբ տեսակցել է Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի, «Հայաստանի սոխակ» Գոհար Գասպարյանի, բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի, կոմպոզիտոր Էդվարդ Միրզոյանի, հրապարակախոս Զորի Բալայանի եւ մեծագույն Շառլ Ազնավուրի հետ: Նրանցից եւ ընդհանրապես Հայաստանի տարբեր խաղաքներում (Գյումրի, Վանաձոր, Թալին, Օշական, Ջերմուկ եւ այլն) հաստակ ժողովրդի հետ ունեցած իր շփումներից ստացած տպավորություններն ու հիշողությունները այնքան հարուստ են ու հաճելի նրա համար, որ նա ժամերով կարող է պատմել դրանց մասին՝ վերհիշելով հետաքրքրական մանրամասներ ու իրավիճակներ: Գյուղերից մեկում, որտեղ իսկական հայկական թոնիր տեսնելու համար է գնացել, նրան խնդրել են նորածին երեխայի կնքամայր դառնալ: Ընդունել է, եւ Սբ Սարգիս եկեղեցում կազմակերպել են կնունքի արարողությունը: Այս անգամ իր սանիկին այցելած Ջիլբերտան ընտանիքի մյուս երեխայի կնքամայրն է դարձել:

«Ամեն գալուս այնքան լուսանկարներ եմ քաշում (վերջին անգամ՝ այս տարվա մայիսին միայն 6500-ից ավելի նկար էի քաշել) եւ հաջորդ գալուս նվիրում մարդկանց, որ ինձ «ժամանակագիր» են անվանում, քանի որ դրանցում նրանք տեսնում են իրենց զավակների մեծանալը», ասում է նա իր եւ ամուսնու՝ Սթենֆորդ Ֆասի հետ «Մարիոթ-Արմենիայում» մեր հանդիպման ժամանակ:

Սկզբնական շրջանում Հայաստան սկսել է այցելել Հայկական համագումարի ներկայացուցիչների հետ տարեկան մեկ անգամ: Հետո զգացել է, որ դա բավական չէ ժողովրդի հետ լիարժեք հանդիպումների համար եւ որոշել է մի անգամ նրանց հետ գալ Հայաստան, մեկ անգամ էլ՝ առանձին կամ ամուսնու հետ, իր համար ազատորեն ըմբռնելու այն, ինչը հայկական է՝ ընտանեսիրությունը, հյուրասիրությունը եւ խոհանոցը: Լավատեսկին է եւ ամեն գալուն, իր իսկ խոսքերով, նորություններ ու առաջընթաց նկատում է այստեղ: Բայց չի խուսափում նաեւ նշել, որ դեռ բավականաչափ «կարգ ու կանոն» հաստատելու բնագավառներ կան, որոնցից կարեւորագույնն է համարում պայքարը կաշառակերության դեմ:

Ժամանակին երազել է գրադարանավարուհի դառնալ, բայց հանգամանքների բերումով չի ստացվել: Հետո ամուսնացել է, երկու որդիների դաստիարակությամբ զբաղվել, եւ անցել են տարիներ: «Հիմա մեր տանը այնքան հուշանվերներ եւ լուսանկարներ են հավաքված, որ պատերին այլեւս տեղ չկա: Մտածում եմ բնակարանիս մի մասը «Հայկական թանգարանի» վերածել, որպեսզի մարդիկ գան, տեսնեն ու ծանոթանան այս հրաշալի երկրին ու մարդկանց հետ», ասում է նա՝ ավելացնելով, որ զանազան կազմակերպություններ հաճախակի նրան հրավիրում են դասախոսություններ կարդալու իր այցելությունների վերաբերյալ: «Կան հայեր, որ շատ քիչ բան գիտեն Հայաստանի մասին», զարմացած ասում է նա եւ հպարտությամբ ցույց տալիս իր գնած վերջին հուշանվերները, որոնք բոլորն էլ «կարմիր, կապույտ եւ ծիրանագույն» են կամ կրում են «Արարատի» խորհրդանշանը:

Իմ հարցին, թե չի՞ ցանկանում արդյոք գիրք գրել իր տպավորությունների եւ հիշողությունների մասին, նա ոգեշնչված պատասխանեց. «Օհ, մտածել եմ այդ մասին: Նույնիսկ վերնագիրն եմ հորինել՝ «Ողջո՛ւյն, անծանոթ, ցտեսությո՛ւն, ընկեր ջան»: Բայց դեռ չեմ սկսել գրել»:

Մաղթենք, որ մոտ ապագայում նա ժամանակ կգտնի գրի առնելու մեկ հատորի մեջ այն ամենը, ինչ իր urտում ու հոգում զգում է հայերի հանդեպ, եւ դրանով ուրիշների սեփականությունը կդարձնի դրանք:

ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆ

Ձերբակալվել է ռուսական ամենավտանգավոր աղանդներից մեկի առաջնորդը

Նովոսիբիրսկում ձերբակալվել է «Շամբալայի աղրամ» աղանդի առաջնորդ, «Շամբալայի մեծ հիերարխ» եւ «Լուսավորյալ ուսուցիչ» Կոնստանտին Ռուդնեւը:

2009-2011 թթ. Ռուդնեւի նկատմամբ քրեական գործեր էին հարուցվել «անձի եւ խաղաքացիների իրավունքները ոտնահարող միավորման կազմակերպում», «բռնաբարություն» եւ «սեռական բռնարարքներ» հոդվածներով: Այս տարվա սեպտեմբերի 30-ին միլիցիայի աշխատակիցները Նովոսիբիրսկում եւ Նովոսիբիրսկի շրջանի այգեգործական ընկերություններից մեկում խուզարկություններ են կատարել Ռուդնեւի համայնքին պատկանող տներում:

ՌԻԱ գործակալության տվյալներով, «Շամբալայի աղրամ» («Շամբալայի դպրոց») աղանդը Ռուսաստանի ամենավտանգավոր քրեական աղանդներից մեկն է: Կոնստանտին Ռուդնեւի կրոնական ուսմունքը մի ամբողջ շարք ծածուկ-կրոնական եւ նոր ինդուիստական ուսմունքների խառնուրդ է:

Առավել նվիրված հետեւորդները մշտապես բնակվում են աղրամում, որտեղ առկա են «հոգեւոր աշի հատուկ պայմաններ» (3-ժամյա քուն, աղքատիկ բուսական սնունդ, անդուլ աշխատանք, հաճախակի կիրառվող ֆիզիկական, երբեմն՝ սադիստական բռնություններ, կանանց համար՝ սեռական «տանտրա-պրակտիկաներ»): Կիրառվում է հավատական մեդիտացիա, որի ընթացքում անեծքներ են հասցեագրվում «թշնամիներին»:

Աղանդի հետ կապ չունեցող մարդկանց անվանում են «մկներ», նրանց հետ հարաբերվելիս թույլատրելի են համարվում գողությունը, խաբեությունը եւ բռնությունը: Աղանդավորների հանդիպումներից մեկի ժամանակ շատ է խոսվել Հիտլերի մասին, բոլոր ծերերին եւ թույլերին ոչնչացնելու անհրաժեշտության մասին:

ՌԴ իրավապահ մարմինների տվյալներով, Ռուդնեւի աղանդը Նովոսիբիրսկում ստեղծվել է 1989-ին եւ ներկայումս բաժանմունքներ ունի երկրի շատ քաղաքներում: «Շամբալայի աղրամը» 1999-ին ուներ մոտ 10 հազար հետեւորդ: Գործելակերպը որոշ նմանություն ունի ճապոնական տխրահռչակ «Աում Սինրիկյո» աղանդի հետ:

Կոնստանտին Ռուդնեւը իրեն անվանում է Շրի Ջնան Ավատար Մունի, որն իբր Սիրիուս աստղից Երկիր է գործուղվել մարդկանց լուսավորելու եւ դեպի ճշմարտություն տանելու համար: Անցյալում Ռուդնեւը իր կազմակերպությունն անվանել է Ծածուկ գիտությունների ակադեմիա, Ռուսական տանտրայի դպրոց, Գեյշաների դպրոց:

ՀԤԲ հեռուստաընկերության տվյալներով, Ռուդնեւը նախկին պողպատալաղոդ է, որին չի հաջողվել սովորել եւ ինժեներ դառնալ: 2004-ին Ռուդնեւին որպես անմեղսունակ անձի տեղափոխել են հոգեբուժարան, որտեղից առեղծվածային կերպով անհետացել է: Այն ժամանակ նրա որոնումներն արդյունք չեն տվել եւ դադարեցվել են:

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՆԴՀԱՏՎԵ՞Լ ԵՆ

Եվրոպան հաստատակամ է, Թուրքիան հիասթափվում է

Եվրոինտեգրման հարցերով Թուրքիայի պետնախարար **Էգեմեն Բաղըշը**, ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի փոխանցմամբ, հայտարարել է, որ Եվրոմիությանը Թուրքիայի անդամակցության բանակցությունները գործնականում ընդհատվել են. «Բանակցությունները ընդհատվել են այնպիսի խաղաքական ինտրիգներով, որոնց չի հանդիպել ԵՄ թեկնածու եւ ոչ մի երկիր: Այսպիսի մոտեցումը անարդար է եւ չհիմնավորված: Թուրք ժողովուրդն ավելի ու ավելի է հիասթափվում Եվրոմիության անդամ դառնալու իր ցանկությունից», նշել է Բաղըշը:

Հիշեցնենք, որ 1995-ից Անկարան բանակցություններ է սկսել Եվրոպական միության հետ՝ ցանկանալով դառնալ վերջինիս լիիրավ անդամ: Սակայն ԵՄ մի շարք երկրները, այդ թվում՝ այնպիսի եվրոպական «հսկաներ», ինչպիսիք են Գերմանիան ու Ֆրանսիան, մինչեւ օրս դեմ են հանդես գալիս Անկարայի լիիրավ անդամակցությանը: Եվրոպայում շատերը չեն ցանկանում ընդգրկել տնտեսապես համեմատաբար թույլ, 75 մլն բնակչությամբ մի երկիր, որի բնակիչների մեծամասնությունն ապրում է Ասիայում: Բացի այդ՝ Թուրքիան հրաժարվում է դադարեցնել Եվրոմիության անդամ Կիպրոսի շրջափակումը՝ չճանաչելով վերջինիս տարածքային ամբողջականությունը: Եթե այս ամենին գումարվի նաեւ առավելապես հայամետ գործիչների առաջ քաշած մյուս նախապայմանը՝ Հայոց ցեղասպանության ճանաչումը, ապա ակնհայտ է, որ մոտ ապագայում Թուրքիան չի կարող դառնալ «քրիստոնեական ակումբի» անդամ, ինչպես հաճախ անվանում են Եվրոմիությունը Թուրքիայում:

Հ. Ա.

Լիբանանի հարավում Իրանի փողերով կառուցվել է Ալ Ամսայի նմանակը

Լիբանանա-իսրայելական սահմանից 500 մետր հեռավորության վրա, Մարուն ար Ռաս գյուղում արագ տեմպերով կառուցվում է եւ գրեթե ավարտված է մի մզկիթ, որի պատվիրատուն Իրանն է: Բանվորները ջանք չեն խնայում, որ կառույցը շահագործման հանձնվի մինչեւ հոկտեմբերի 13-ը, երբ պաշտոնական այցով Լիբանան կժամանի Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը: Լիբանանա-իսրայելական երկրորդ պատերազմի ժամանակ Մարուն ար Ռասի մոտակայքում «Հզբոլլահի» եւ իսրայելական բանակի միջեւ հաստկապես ծանր մարտեր են մղվել, հիշեցնում է «Եդիոտ Ահրոնոտ» թերթը:

Ահմադինեժադի այցելության առթիվ Լիբանանի հարավում՝ Իսրայելի սահմանից 500 մետր հեռավորության վրա տեղի կունենա «Մինի էլ Ղուդս» զբոսայգու բացման արարողությունը, իսկ բլրի գագաթի վրա կփայլատակի «Ալ Ամսայի» ոսկեզօծ գմբեթը. այդ նոր կառույցը պաղեստինյան հանրահայտ Ալ Ամսա մզկիթի ճշգրիտ նմանակն է: Երուսաղեմում՝ Տաճարի լեռան վրա գտնվող Ալ Ամսայից նոր մզկիթը տարբերվում է միայն նրանով, որ գմբեթի վրա Իրանի դրոշն է, իսկ ներսի պատերի զարդանախշերում օգտագործված են իրանական զինանշանի տարրեր. նախագիծն իրականացվում է Իրանի ֆինանսավորմամբ:

Տեղական լրատվամիջոցները հաղորդում են, որ Լիբանանի հարավում վերջին ամիսներին փաստորեն կառուցվում է զբոսաշրջության նոր օբյեկտ: Մզկիթից բացի, այստեղ կստեղծվի հեշտոցների ճանապարհ, կկառուցվի դիտահարթակ, որտեղից գեղեցիկ տեսարան կբացվի Իսրայելի կողմը: Պարզ եղանակին տեսանելի կլինի Իսրայելի տարածքի մեծ մասը: Մամուլում հայտնված տեղեկությունների համաձայն, եկող շաբաթ Մահմուդ Ահմադինեժադը կայցելի հենց այդ զբոսայգին, թեեւ նրան փորձում են նման քայլից հետ պահել ինչպես լիբանանցի խորհրդարանականները, այնպես էլ Սիրիայի նախագահ Բաշար Ասադը:

Ամերիկյան նավթային ընկերությունները հեռանում են Լիբիայից

Chevron եւ Occidental Petrolium նավթային ընկերությունները հրաժարվել են աշխատանքը շարունակել Լիբիայում: Այդ մասին Ռոյթեր գործակալության թղթակցին հայտնել են Լիբիայի Ազգային նավթային կորպորացիայում:

Ամերիկյան հիշյալ երկու ընկերությունները չեն երկարաձգել Լիբիայում նավթի ու գազի հանքավայրերի մշակման հնգամյա արտոնագրերը: Բացի դրանից, նույն կերպ են վարվել ավստրալական Woodside Petrolium եւ Աբու Դաբիի Liwa Energy ընկերությունները:

Միաժամանակ հաղորդվում է, որ սեփական արտոնագրերը երկարաձգել են Hess (ԱՄՆ), Energia (Ինդոնեզիա), Oil India (Հնդկաստան) եւ Sonatrach (Ալժիր) ընկերությունները:

Chevron-ը եւ Occidental Petrolium-ը 2005-ին լիբիական շուկա մուտք գործած առաջին արտասահմանյան ընկերություններից են: Լիբիայում աշխատանքը չշարունակելու մի շարք ընկերությունների որոշումը թերեւս կապված է այն բանի հետ, որ առաջին հինգ տարիների ընթացքում նրանց չի հաջողվել հայտնաբերել օգտակար հանածոների նշանակալի հանքավայրեր:

Բացի դրանից, արտասահմանյան բիզնեսի ներկայացուցիչները Լիբիայում հաճախ բախվում են երկրի ղեկավարության հարուցած բազմաթիվ խոչընդոտներին: Արտոնագրի երկարաձգման հետ կապված մյուս բարդությունը նյութական խոշոր ներդրումների անհրաժեշտությունն է: Լիբիական կորպորացիայի ղեկավարության տվյալներով, երկրում աշխատանքը շարունակելու որոշում ընդունած ընկերությունները պետությանը վճարել են ավելի քան 130 մլն դոլար:

Հայաստանը նույնպես ունի կայացած միջազգային անիմացիոն կինոփառատոն

«ReAnimania» միջազգային անիմացիոն կինոփառատոնը Հայաստանում անցկացվեց վերջերս: Երեկ՝ փառատոնի փակումից 2 շաբաթ անց, «Գոլդեն թյուլիփ» հյուրանոցում ամփոփիչ ասուլիս էր կազմակերպվել: «ReAnimania» փառատոնի հիմնադիր-տնօրեն **Վրեժ Քասունին** նշեց. «Մենք որոշեցինք փառատոնի փակումից 2 շաբաթ անց կատարել ամփոփումը, քանի որ սպասում էինք հանրության արձագանքներին: Ստացանք նամակներ, որոնք ողջունում էին մեր փառատոնը»: Ստացված արձագանքները փաստում են, որ Հայաստանն ունի կայացած միջազգային անիմացիոն կինոփառատոն:

Ասուլիսի սկզբում մշակույթի նախարարության ժամանակակից արվեստի եւ ժողովրդական արհեստների վարչության պետ **Սոնա Հարությունյանը** ՀՀ վաստակավոր նկարիչ **Ստեփան Անդրանիկյանին** հանձնեց մշակույթի նախարարության ոսկե մեդալը: Սոնա Հարությունյանը նշեց, որ Ստեփան Անդրանիկյանին շնորհվող պարգեւը ուշացված պարգեւ է: «Մշակույթի նախարարությունը Ձեր գործի համար դեռ վաղուց պետք է Ձեզ պարգեւատրած լիներ: Շատ ուրախ եմ, որ Դուք պահպանում եք բեմանկարչության ավանդույթները», նկարչին ասաց Սոնա Հարությունյանը: Հայաստանի ազգային կինոկենտրոնի տնօրեն Գեւորգ Գեւորգյանը նշեց, որ Ստեփան Անդրանիկյանն իր ամբողջ կյանքը նվիրել է մեր մշակույթին: Այնուհետեւ կինոկենտրոնի տնօրենն անդրադարձավ «ReAnimania» փառատոնին, նա տեղեկացրեց, որ անիմացիոն դեբյուս-մրցույթում հաղթել է **Մերի Կյուրեղյանը:** «Դեբյուսային մրցույթի հաղթողին մրցանակը տրամադրվելու է ֆինանսավորման տեսքով», ասաց **Գեւորգ Գեւորգյանը**: Մերի Կյուրեղյանը ֆինանսավորումն առձեռն չի ստանալու. ֆինասավորվելու են նրա նյութերը, որպեսզի դրանք իրենց վերջնական տեսք ստանան: «ReAnimania» միջազգային կինոփառատոնի գեղարվեստական տնօրեն **Լուսինե Քասարջյանն** էլ ներկայացրեց «Տաղանդների որս» մրցույթի հաղթողներին, որոնք հնարավորություն կունենան մասնակցելու իննամսյա դասընթացների: Այս տարի փառատոնի շրջանակներում առաջին անգամ է անցկացվում «Տաղանդների որս» մրցույթը, որի նպատակն է գտնել տաղանդավոր երիտասարդների: Լուսինե Քասարջյանը տեղեկացրեց, որ այս տարի փառատոնին մասնակցել են 35 երկրներից, ամենաշատ դիմումներն էլ ստացվել են Ֆրանսիայից: Անիմացիոն կինոփառատոնի շրջանակներում նաեւ վարպետության դասեր են անցկացվել: Այդ դասերի ժամանակ հայ անիմատորները հնարավորություն են ունեցել լսելու հայտնի մասնագետների դասախոսությունները: Սոնա Հարությունյանի փոխանցմամբ՝ մշակույթի նախարարությունը շատ է կարեւորում այդ վարպետության դասերը: «Հաջորդ փառատոնի ընթացքում ցանկալի է, որ հյուրընկալենք մասնագետների նաեւ Ռուսաստանից, որտեղ շատ են անիմացիայի մասնագետները», ասաց Սոնա Հարությունյանը: Վրեժ Քասունու խոսքով՝ 2011 թվականի «ReAnimania»-ի ծրագիրը 70-80 տոկոսով պատրաստ է: Այս փառատոնն ընդգրկվել է մշակույթի նախարարության 2011 թվականի բյուջեի մեջ եւ նախարարությունից ստանալու է որոշակի ֆինանսավորում:

Ի. Պ.

Վարագ Առաքելեան-100

ՀՀ ԳԱԱ Հր. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտի գիտական խորհրդի եւ ՀՀ ԳԱԱ հայագիտութեան բաժանմունքի համատեղ նիստ՝ նուիրուած պրոֆեսոր Վարագ Առաքելեանի (1910-2001) ծննդեան 100-ամեակին (2010 թ. հոկտեմբերի 1-ին, ժ. 15.00-ին, ՀՀ ԳԱԱ Գրականութեան ինստիտուտի դահլիճ, Գրիգոր Լուսաւորչի փողոց 15, 3-րդ յարկ):

20-րդ դարի երկրորդ կէսի ամենից աւելի խոշոր եւ վաստակաշատ հայագէտներից մէկը՝ լեզուաբան-բանասէր, ազգային եւ հասարակական գործիչ, պրոֆեսոր Վարագ Առաքելեանը ծնուել է Աբովեանի շրջանի Կոտայք գիւղում (նախկինում՝ Ելկովան) 1910 թ. հոկտեմբերի 1-ին: Իր բարձրագոյն կրթութիւնն ստացել է Երեւանում: Բանասիրական գիտութիւնների դոկտորի աստիճանի է արժանացել 1960 թ.: Երկար տարիներ գլխաւորել է Գիտութիւնների Ակադեմիայի՝ Հրաչեայ Աճառեանի անուան Լեզուի ինստիտուտի Հայոց լեզուի պատմութեան բաժինը (1958-ից), դասաւանդել է Երեւանի պետական համալսարանում եւ Մանկավարժական ինստիտուտում:

Վարագ Առաքելեանի գիտական հետաքրքրութիւնների եւ ուսումնասիրութիւնների շրջանակը շատ լայն է եղել՝ գրաբար, հայոց լեզուի պատմութիւն, ժամանակակից գրական հայերէն, ոճաբանութիւն, բառարանագրութիւն, բարբառագիտութիւն, մատենագրութիւն, հայ գրականութիւն, հայոց պատմութիւն, հայոց մշակոյթի պատմութիւն, շէֆպոիրագիտութիւն, յուշագրութիւն, հրապարակախօսութիւն: Հետաքրքրութիւնների այդպիսի բազմակողմանիութիւնը բնորոշ է եղել մեր անցեալի գրեթէ բոլոր հայագէտներին, եւ ամենեւին պատահական չէ, որ դա հիմնաւորապէս արտայայտուել է նաեւ դասական հայագիտութեան վերջին նշանաւոր ներկայացուցիչներից մէկի՝ Վարագ Առաքելեան գիտնականի մօտ: Մայր ժողովրդի ու մայրենիի հանդէպ պաշտամունքի հասնող սէրը եւ բանասիրական բարձր պատասխանատուութիւնն ու խոր իմացութիւնները նրան հնարաւորութիւն են ընձեռնել պատմաբանասիրութեան ամենատարբեր բնագաւառներում ասելու իր հիմնաւոր ու ծանրակշիռ խօսքը:

Այդ ամենին պէտք է գումարել նաեւ Վարագ Առաքելեանի հասարակական-քաղաքական բարձր կեցուածքը, մեր հասարակական գիտակցութեան մէջ հայոց անկախ պետականութեան վերականգնման եւ հայութեան շահերի պաշտպանութեան գաղափարների արմատաւորման ուղղութեամբ նրա մղած անդադրում պայքարը: Նա անմնացորդ ապրել է դրանով եւ օգնել ուրիշ նուիրեալներին՝ իր բազմաթիւ աշակերտներին ու հետեւորդներին՝ գտնելու իրենց ամենամեծ երջանկութիւնն այդ պայքարի բովում: Խորհրդային իշխանութեան վերջին տասնամեակում Վարագ Առաքելեանի կազմակերպչական ջանքերով է իրագործուել խաչքարի հաստատումը Արամ Մանուկեանի շիրիմի վրայ, ինչպէս նաեւ Գարեգին Նժդեհի աճիւնի գաղտնի տեղափոխումը Վլադիմիրից Հայաստան եւ ամփոփումը Սոթիսպաւորի վանքում եւ Խուստուփ լեռան լանջին:

Իր անչափ տառապալից, բայց միաժամանակ չափազանց բեղմնաւոր կեանքի ընթացքում Վարագ Առաքելեանը հրատարակել է մի քանի տասնեակ մենագրութիւններ ու գիտական յօդուածներ: Դրանցից առաւել նշանաւոր են՝«Աւետիք Իսահակեանի պոէզիայի բառապաշարի ոճաբանական առանձնայատկութիւնները» (1954 թ.), «Ժամանակակից հայերէնի հնչիւնաբանութիւն» (1955 թ.), «Ժամանակակից հայերէնի հոլովների եւ հոլովական կապակցութիւնների իմաստային առումները» (1957), «Հայերէնի շարահիւսութիւն» (հատոր 1-2, 1958, 1964), «Հայերէնի պարբերոյթը» (1968), «Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարան» (հտ. 2-րդ, 1972), «Գրիգոր Նարեկացու լեզուն ու ոճը» (1979) եւ այլն: Հմուտ մատենագրագէտը հրատարակել է Մովսէս Կաղանկատուացու (Դասխուրանցու) «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի գիտա-քննական բնագիրը (1983), ինչպէս նաեւ գրաբարից աշխարհաբարի վերածել միջնադարեան հայ պատմիչների երկերը (Մովսէս Կաղանկատուացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի»-ն, Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմութիւնը»):

Արդէն հետմահու հրատարակուել են (պետական պատուէրով) Վարագ Առաքելեանի Հուշագրութիւնների հատորեակը (2003), Ուխտանէս եպիսկոպոսի «Հայոց պատմութեան» աշխարհաբար թարգմանութիւնը (2006) եւ «Գրաբարի քերականութիւն»-ը (հտ. Ա, 2010): Բայց նրա դեռեւս անտիպ աշխատութիւնների ցուցակն ընդգրկում է մէկ տասնեակից աւելի անուն: 2001 թուականից Վարագ Առաքելեանի անունով է կոչւում ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Ծիծեռնավանք գիւղի միջնակարգ դպրոցը:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

Գյումրիում մեկնարկեց «Գերմանական շաբաթը»

Քաղաքի 25-րդ միջնակարգ դպրոցի ճեմասրահում հոկտեմբերի 5-ին բացված, Բեռլինի պատի անկման մասին պատմող լուսանկարչական ցուցահանդեսով Գյումրիում մեկնարկեց գերմանական միջոցառումների շաբաթը, որը կազմակերպել են մեր երկրում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանությունը եւ Գյոթեի ինստիտուտը: Ցուցահանդեսում ներկայացված լուսանկարները պատկերում են 20 տարի առաջ այս երկրի վերամիավորման պատմական իրադարձության հետ կապված համաժողովրդական խանդավառության դրվագներ, թերեւս ցույց տալով նաեւ, որ աշխարհում որեւէ երկիրը կիսող անգամ բեռլինյան պատը կամ փեալարը մի օր կարող է փլվել, վերանալ... Շաբաթի առաջին օրը կազմակերպված միջոցառումներից էր նաեւ Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության ծրագրով Հայաստան երկարաժամկետ գործուղված, Երեւանի Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի գերմաներենի ամբիոնի վարիչ պրոֆ. Մաթիաս Ֆրիցի դասախոսությունը՝ երկու գերմանական պետությունների միջեւ բաժանարար պատի անկումից առաջ եւ հետո իր ապրած տարիների մասին:

Հաջորդ վեց օրերին քաղաքում նախատեսված են նաեւ ԳԴՀ առօրյան ներկայացնող, բեռլինյան պատի անկման թեմայով ցուցահանդեսներ, համերգային ծրագիր, Սարդարապատի, Երեւանի եւ Գյումրու՝ Գերմանիայի կողմից հովանավորվող դպրոցների աշակերտների ֆուտբոլային մրցաշար, այլ միջոցառումներ: Դրանցից մեկը հոկտեմբերի 7-ին կկազմակերպվի քաղաքի 3-րդ ավագ դպրոցում, որը կհամալրի նշված հովանավորյալ կրթօջախների շարքը: Միքայել Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում կայանալիք հանդիպումների ընթացքում ուսանողներին կներկայացվեն նաեւ Գերմանայում ուսանելու հնարավորությունները:

«Գերմանական շաբաթը» կավարտվի հոկտեմբերի 12-ին՝ Գյումրու 3-րդ դպրոցում կայանալիք միջոցառմամբ, որի ընթացքում Գյոթեի ինստիտուտի աշխատակցուհի, մանկական գրքերի հեղինակ Թամարա Բախը կընթերցի իր ստեղծագործություններից:

Գ. Մ.

Եգիպտոսի հեռուստաստղը՝ Լիզ (Անուշ) Սարգիսյանն է

Արաբական երկրներում հանրաճանաչ դերասանուհի, հեռուստաստղ Լիզ (Անուշ) Սարգիսյանին Կահիրեի օդերային շքեղ դահլիճում գտնվող 1500 եւ ավելի հայեր, արաբներ, օտարերկրյա դերասաններ, որոնք եկել էին ըմբոշխնելու «Հայկական մշակույթի օրեր» ծրագրի հանդիսավոր բացման գալա-համերգը, հոտնկայս ծափահարեցին: Դահլիճ մտնող սիրված դերասանուհուն արաբական աշխարհում Իմանի են կոչում, նրան շատ բարձր են գնահատում հատկապես Եգիպտոսում:

Համերգից հետո «Ազգը» զրուցեց գեղեցիկ, սլացիկ կազմվածքով հայուհու հետ ու տեղեկացավ, որ Լիզը լիբանանահայ է եւ արդեն երկու տասնամյակից ավելի ապրում է Եգիպտոսում: Չկա մի արաբական երկիր, որ տեսած ու սիրած չլինի այն մի քանի տասնյակի հասնող ֆիլմերը, հեռուստասերիալները, որոնցում մշտապես գլխավոր դերերով է հանդես եկել Լիզ Սարգսյանը: Լիզի մասին շատ գեղեցիկ խոսքեր ասաց նաեւ Եգիպտոսի նախագահի տեղակալն ու շեշտեց. «Եգիպտոսի առաջին վարչապետ Նուբար փաշային հարգում ու հպարտանում ենք նրա կատարած գործունեության համար, իսկ Լիզը՝ դարձել է բոլորիս կուռքը, մտել մեր ընտանիքներ իր հրաշալի դերասանական խաղով, դարձել սպասված անձ մեր առօրյայում...»:

Հարցին, թե ինչպե՞ս եք կարողացել մաքուր ու անաղարտ պահել հայերենն ու ի՞նչ տպավորություն ստացաք համերգից, ասաց. «Չեմ կարող բացատրել այն զգացումները, որ այս երեկո պարգեւեց «Թաթուլ Ալթունյանի» անվան երգի ու պարի համույթը: Այնքան հպարտ եմ հայ լինելու համար, ու ես դահլիճում մի պահ ինձ բեմի վրա պատկերացրի, մտքով երգեցի հայկական մեր մաքուր երգերը, տեղումս նստած շարժումներ էի անում նազանքով պարող աղջիկների հետ ու երազում՝ երանի մի օր էլ ես այդպես պարեի: Որոշել եմ, պետք է պարի դասերի գնամ: Չէ, չկարծեք հայկական պարեր չգիտեմ, բայց որոշ շարժումներ ինձ շատ դուր եկան: Այստեղ հայկական համայնքը շատ կուռ է, չկա կուսակցական տարանջատում եւ հաճախ ենք հանդիպում: Իսկ երբ Հայաստանից են գալիս արվեստագետներ, որեւէ միջոցառում բաց չենք թողնում: Անկախությունը մեզ համար շատ կարեւոր է, եւ այսօր, այստեղ ձեզ հետ այս տոնը նշելը առավել մեծ պատիվ է ու հպարտություն: Իսկ իմ մաքուր հայերենին տիրապետելը ինքնանպատակ չէ: Ես ամենքին ուղղում եմ, որ ճիշտ խոսեն, ճիշտ գրեն, որ մեր մայրենի լեզուն չկորի: Իմ նամակները, գրությունները միշտ հայերենով եմ գրում ու հպարտանում եմ, որ տիրապետում եմ վարժ ու գրագետ հայերենին, դրանով օրինակ եմ ծառայում, որ արաբական երկրներում հայերը չմոռանան իրենց մայրենի լեզուն: Մենք հպարտ ենք, որ չենաղ երկիր Հայաստան ունենք ու այն պետք է վայելի ամեն մի հայ, որտեղ էլ որ լինի»:

Լիզ Սարգիսյանն այնուհետեւ պատմում էր, որ իր կրթության ու դաստիարակության գործում մեծ դեր է ունեցել հայրը՝ Թորոս Սարգիսյանը, որը Հայաստանում մասնագիտացել է թատերավեստում, ու այդ սերը թատրոնի հանդեպ հորից է փոխանցվել իրեն: Նա ՀԵԸնկերակցության «Վահրամ Փափազյան» թատերախմբի հիմնադիր դերասաններից էր: Լիզը սկզբնական շրջանում հայկական նույն թատերախմբում է խաղացել, իսկ հետո, երբ լավ տիրապետել է արաբերենին՝ հրավիրվել է Եգիպտոս ու շուրջ 30 տարի մշտապես գլխավոր դերեր է վստահվել Լիզին: Իհարկե, Լիզի երազանքն է մի օր այցելել Հայաստան, ստանձնել որեւէ դեր, եթե հայ ռեժիսորներից ստանար հրավեր: Հուսանք, որ մի օր Լիզ Սարգսյանի երազանքը կիրականանա ու հայկական հեռուստաթերթերը կհրավիրեն հանրաճանաչ հայազգի դերասանուհուն, որն աշխարհի տարբեր երկրներում, փառատոներում արժանացել է բարձրագույն մրցանակների:

Լի՛զ, մենք քեզ սիրով սպասում ենք...

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ
Կահիրե-Երեւան

«Հաֆիսի» գործունեությունը բասկետբոլի զարգացման նոր խթան

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, եվրոգավաթների խաղարկությանը նախապատրաստվող «Հաֆիս» բասկետբոլի կանանց թիմը Կուրսկում մասնակցելով միջազգային մրցաշարի, զբաղեցրել էր 2-րդ տեղը: «Հաֆիսը» մրցաշարը սկսել էր Կուրսկի «Դինամոյից» կրած պարտությամբ (59-69), այնուհետեւ հաղթել էր Վոլոգդայի «Չեւակասային» (65-47) եւ Կիեւի «Տիմ ՍԿՈՒՖ-ին» (73-53):

Երեկ ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարության նիստերի դահլիճում կայացավ «Հաֆիսի» ասուլիսը, որին բացի բասկետբոլիստուհիներից, ներկա էին նաեւ թիմի գլխավոր մարզիչ Գիա Ղազանչյանը, բասկետբոլի Հայաստանի ֆեդերացիայի նախագահ, ՀԱՕԿ-ի գլխավոր քարտուղար Հրաչյա Ռոստոմյանը եւ «Հաֆիսի» խորհրդի անդամ Ռաֆֆի Նիզիբլյանը:

Ռաֆֆի Նիզիբլյանը տեղեկացրեց, որ «Հաֆիսի» մեկ տարվա գործունեությունը զգալի աճ է առաջացրել բասկետբոլի սիրահարների շրջանում թե Հայաստանում, թե սփյուռքում: Հաջողվել է բավական մարտական կոլեկտիվ կազմավորել տեղացի եւ արտերկրի բասկետբոլիստուհիներից, որոնք արդեն զգալի փորձ են ձեռք բերել: Ուսի ակնկալիքներ կան, որ «Հաֆիսն» այս տարի ավելի հաջող մրցելույթներ կունենա: Թիմի գլխավոր հովանավորը «Վիվասել ՄՏՍ-ն» է, արդեն 2-րդ տարին համագործակցում են «Պումայի» հետ: Կան նաեւ այլ գործընկերներ, որոնք աջակցում են ակումբի գործունեությանը:

Հրաչյա Ռոստոմյանը նշեց, որ «Հաֆիսն» իր մեկամյա գործունեությամբ ապացուցեց բռնած գործի շարունակական բնույթը: Նա ընդգծեց, որ «Հաֆիսը» միայն բասկետբոլի կանանց եւ տղամարդկանց թիմերով չի սահմանափակվում: Ակումբն իր առջեւ մեծ նպատակներ է դրել զարգացնելու ու մասսայականացնելու բասկետբոլը Հայաստանում: Այդ նպատակով ակումբի բյուջեից 20 մլն դրամ է հատկացվել հանրաթեության 14 քաղաքներում մանկապատանեկան խմբեր բացելու համար: Ըստ ֆեդերացիայի նախագահի, ՀԱՕԿ-ը եւս աջակցում է այդ գործին:

Խոսք գնաց նաեւ տղամարդկանց բասկետբոլը հանրաթեությունում զարգացնելու, աղջիկների օրինակով նաեւ տղամարկանց «Հաֆիս» թիմը ուժեղ կոլեկտիվ դարձնելու անհրաժեշտության մասին: Հրաչյա Ռոստոմյանը նշեց, որ այդ հարցերով եւս աշխատանքներ իրականացվում են, սակայն տղամարդկանց բասկետբոլը մի քանի անգամ ավելի շատ ֆինանսական միջոցներ է պահանջում: Այդ իսկ պատճառով միայն մի քանի տարի անց հնարավոր կլինի լուծել նաեւ այդ հարցերը: Ամեն դեպքում, արտերկրում կան մոտ 20 ուժեղ բասկետբոլիստներ, որոնք համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում հնարավոր կլինի հրավիրել Հայաստան:

Թիմի գլխավոր մարզիչ **Գիա Ղազանչյանն** անդրադարձավ «Հաֆիսի» ելույթներին ու նախապատրաստությանը: Նա նշեց, որ անցյալ տարվա համեմատ թիմի կազմը զգալիորեն փոփոխվել է: Թիմում 5 նորեկներ են ընդգրկվել: Քիաննա Չենին ժամանակին հանդես է եկել WBA-ի առաջնությունում, այնուհետեւ խաղացել է թուրքական «Սամսունգում»: Էրիկա Դեւիսը «Հաֆիս» է տեղափոխվել ֆրանսիական «Լիմոժից», Բրիտանի Դենսոնը՝ լեհական «Օդրոյից», Քրիստինե Քեփենեկյանն ԱՄՆ-ից է, իսկ Չաղդելայնը՝ Կանադայից:

«Հաֆիսն» այս տարի ավելի վաղ՝ սեպտեմբերից է սկսել նախապատրաստությունը եվրոգավաթների մրցաշարին: Թիմը 14-օրյա ուսումնամարզական հավաք է անցկացրել Ծաղկաձորում, այնուհետեւ մասնակցել է Կուրսկի միջազգային մրցաշարին: Գլխավոր մարզիչն ընդհանուր առմամբ գոհ էր թիմի ելույթից: Նա գտնում է, որ «Հաֆիսի» ներկայիս կազմն ավելի ուժեղ է: Բացի այդ էլ, ձեռք բերած մրցակցային փորձը պետք է օգնի բասկետբոլիստուհիներին ավելի հաջող հանդես գալ այս տարվա եվրոլիգայի մրցաշարում: Գիա Ղազանչյանը կարեւորեց նաեւ այն, որ ներկայումս թիմում գրեթե 9-10 հավասարազոր խաղացողներ կան, ինչը հնարավորություն կտա իրեն խաղերի ընթացքում համարժեք փոխարինումներ կատարել: Ընդհանուր առմամբ «Հաֆիսում» 12 բասկետբոլիստուհի է ընդգրկված: Հավանաբար թիմը համալրվի եւս մի քանիսով: Թիմի անդամներից 5-ն ընդգրկված են Հայաստանի կանանց հավաքականում եւ «Հաֆիսում» ելույթները կօգնեն նրանց լավ մարզավիճակ ձեռք բերել: Ամեն դեպքում գլխավոր մարզիչը հուսով է, որ առաջին փուլի արգելքը կրկին կհաղթահարվի:

Մարզասերներին տեղեկացնենք, որ եվրոգավաթի հերթական խաղարկությունը մեկնարկելու է հոկտեմբերի 27-ին: Այդ օր «Հաֆիսը» Նովոսիբիրսկում հյուրընկալվելու է տեղի «Դինամո ԳՈՒՎԴ-ին»: Նոյեմբերի 4-ին Երեւանում «Հաֆիսը» կմրցի Իսրայելի «Էլիտզուրի» հետ: Հենց այս 3 թիմերն էլ կպայքարեն հաջորդ փուլի 2 ուղեգրերի համար:

Հեսախնությունը կպարգի կորեացի մարզուհու իրական տարիքը

Մարմնամարզության միջազգային ֆեդերացիան հետաքննություն է անցկացնում որոշելու ԿԺԴՀ-ի սպորտային մարմնամարզության հավաքականի մարզուհի Խոն Սու Ենի ճշգրիտ տարիքը: Բանն այն է, որ երեք տարբեր մրցումների արձանագրություններում նրա ծննդյան թվականը տարբեր է եղել:

2004-ի Աթենքի օլիմպիադայի մասնակիցների ցանկում կորեացի մարզուհին նշված էր որպես 1985-ի մարտի 9-ին ծնված անձ: 2007-ին կայացած աշխարհի առաջնությունում նրա ծննդյան թիվը 1986-ին էր, իսկ այս տարվա հոկտեմբերին Ռոտերդամում կայանալիք աշխարհի առաջնության փաստաթղթերում նշված է 1989-ի մարտի 9-ը: Եթե վերջին ամսաթիվը համապատասխանում է իրականությանը, ապա Խոն Սու Ենն իրավունք չուներ մասնակցելու Աթենքի օլիմպիադային, քանի որ նրա 16 տարին այն ժամանակ դեռ չէր լրացել:

1993-ին ԿԺԴՀ-ի սպորտային մարմնամարզության հավաքականը հանվել էր աշխարհի առաջնության մասնակիցների ցանկից, քանի որ 1991-ին ոսկե մեդալ նվաճած Կիմ Վան Սուկը երեք մրցաշրջան անընդմեջ հայտավորվել էր որպես 15-ամյա մարզուհի:

Մարմնամարզությունում մարզիկների տարիքի կեղծման դեպքերը սկսվել են դեռեւս 1980-ականներին, երբ վնասվածքների հավանականությունը նվազեցնելու նպատակով նվազագույն տարիքը 14-ից դարձրին 15: 1997-ից մարմնամարզության մրցումներին չի թույլատրվում մասնակցել 16 տարին չլրացած անձանց:

Մեքսիկացիները մտադիր են բոյկոտել խաղերը

Մեքսիկայի ֆուտբոլի ազգային հավաքականի ավագ Ռաֆայել Մարկեսը մեկն է այն 13 ֆուտբոլիստներից, ովքեր որոշել են բոյկոտել հավաքականի հանդիպումները, մինչեւ որ երկրի ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավար կազմում փոփոխություններ տեղի չունենան: Մասնավորապես նրանք պահանջում են հավաքականի տեխնիկական տնօրեն Նեստոր դե լա Տորեի հրաժարականը:

Մեքսիկայի ֆուտբոլի ֆեդերացիան պատժամիջոցներ է կիրառել հավաքականի ֆուտբոլիստների նկատմամբ: Մասնավորապես Կառլոս Վելան եւ Էֆրան Խուարեսը որակազրկվել են 6 ամսով, իսկ 11 ֆուտբոլիստներ տուգանքների են ենթարկվել: Պատճառն այն է, որ Կոլումբիայի հավաքականի հետ ընկերական մրցախաղից հետո Մեքսիկայի հավաքականի ֆուտբոլիստները մարմնավաճառների հետ խնջույք են կազմակերպել:

ԲՈՒՏՔԱՄԱՐՏ

Ըստ Աբրահամի, Ֆրոյը գլխի հետ կապված խնդիրներ ունի

Ինչպես տեղեկացրել ենք, նոյեմբերի 27-ին Հելսինկիում Super Six մրցաշարի շրջանակներում ռինգ են դուրս գալու Արթուր Աբրահամն ու Կառլ Ֆրոյը: Հերթական անգամ մրցակիցները միմյանց հասցեին հայտարարություններ են կատարել: «Ֆրոյը պնդում է, որ հիմնախնդիրներ են ծագել որովայնի հետ կապված: Կարծում եմ, որ նա ավելի մեծ խնդիրներ ունի գլխի հետ կապված: Դատելով նրա անսովոր հայտարարություններից, նա կորցրել է բանականությունը: Ուրախ կլինեմ վերադարձնել նրա մոտ իրականության զգացումը: Անհամբերությամբ եմ սպասում Հելսինկիում կայանալիք մենամարտին եւ խոստանում եմ դիտարժան բռնցքամարտ ցուցադրել», հայտարարել է Արթուր Աբրահամը:

«Աբրահամը հայտարարում է, որ Կեսլերի հետ մենամարտը խիստ ազդել է իմ վրա: Նա ճիշտ է: Դա ինձ ավելի շատ վստահություն ներշնչեց: Մրցավարների հարցում իմ բախտը չբերեց, սակայն ապացուցեցի, որ ցանկացած վայրում համաշխարհային մակարդակի բռնցքամարտիկ եմ: Իսկ Աբրահամը պարտվել է Անդրե Դիրելին, որին հաղթել էի: Թեյլորի եւ Կեսլերի հետ մենամարտերում ապացուցեցի, որ հաջողությամբ կարող եմ մենամարտել ցանկացած տարածքում: Իսկ Աբրահամը սեփական պատերից դուրս պարտվեց: Նա հնարավորություն կունենա ռինգի հատակին պառկած հիանալի հյուսիսափայլով», իր հերթին նշել է Կառլ Ֆրոյը:

Եվրո-2012-ի եզրափակիչ խաղը կկայանա Կիեւում

Մինսկում կայացած ՈՒԵՖԱ-ի գործադիր կոմիտեի նիստում որոշվել է 2012-ի Եվրոպայի առաջնության եզրափակիչ հանդիպումն անցկացնել Կիեւում: Իսկ մեկնարկային խաղը կկայանա Վարշավայում: Քառորդ եզրափակիչի առաջին երկու հանդիպումները կկայանան Վարշավայում եւ Գդանսկում, հաջորդ խաղերը՝ Դոնեցկում եւ Կիեւում: Կիսաեզրափակիչի առաջին խաղի մասնակիցներին կհայտնի Դոնեցկը, 2-րդ խաղը կկայանա Վարշավայում: Ընդհանուր առմամբ Եվրո-2012-ի հանդիպումները կանցկացվեն Ուկրաինայի եւ Լեհաստանի ութ քաղաքներում՝ Դոնեցկում, Լվովում, Խարկովում, Կիեւում, Վարշավայում, Գդանսկում, Պոզնանում եւ Վրոցլավում: Առաջնությունը կմեկնարկի 2012-ի հունիսի 8-ին, կավարտվի հուլիսի 1-ին:

Եվրո-2012-ում վերջին անգամ չեմպիոնի տիտղոսի համար պայքարի դուրս կգան 16 հավաքականներ: 2016-ի Եվրոպայի առաջնությունից սկսած մրցավեճի կբռնվեն 24 հավաքականներ: Այդ առաջնությունը կանցկացվի Ֆրանսիայում: ՈՒԵՖԱ-ի գործկոմը որոշեց նաեւ 2013-ի Եվրոպայի կանանց առաջնությունը կազմակերպելու իրավունքը տալ Շվեդիային: Այդ առաջնության ընտրական մրցաշարը կմեկնարկի հաջորդ տարի:

Վաճառվել է 1936-ի օլիմպիական ջահը

Չեխիայում անցկացված աճուրդում 28 հազար դոլարով վաճառվել է 1936-ի ամառային օլիմպիադայի ջահը, որը մասնակցել է ժամանակակից օլիմպիական խաղերի անդրանիկ փոխանցումավազքին: Ջահի տերը սահմանված էր այն աճուրդի հանել, որպեսզի մարեր պարտքերը:

Օլիմպիական կրակի բոցավառման ավանդույթը ծնվել է դեռեւս Հին Հունաստանում: Իսկ ահա ջահը փոխանցումավազքով օլիմպիադայի մայրաքաղաք հասցնելու գաղափարը պատկանում է 1936-ի ամառային օլիմպիական խաղերի կազմակերպիչներին: Կարծիք կա, որ այդ գաղափարի հեղինակը ֆաշիստական Գերմանիայի պրոպագանդայի նախարար Յոզեֆ Գեբելսն էր: Իսկ պաշտոնական վարկածով այդ միտքը հղացել է գերմանացի պրոֆեսոր Կառլ Դիմը:

ՖԻՖԱ-ն որակազրկել է Նիգերիայի ֆեդերացիային

ՖԻՖԱ-ն որակազրկել է Նիգերիայի ֆուտբոլի ֆեդերացիային, որի հետեւանքով այդ երկրի հավաքականներն ու ակումբները չեն կարող մասնակցել միջազգային պաշտոնական հանդիպումների: Պատճառը երկրի իշխանությունների գործողություններն են ֆեդերացիայի գործունեության նկատմամբ: Դատարանի որոշմամբ Նիգերիայի ֆուտբոլի ֆեդերացիայի անդամներին արգելվել է զբաղվել իրենց գործունեությամբ, իսկ գլխավոր քարտուղարը սպորտկոմիտեի ղեկավարության պահանջով հրաժարական է տվել: Բացի այդ էլ, սպորտի նախարարության ցուցումով Նիգերիայի ֆուտբոլի առաջնությանը մասնակցում են նախորդ մրցաշրջանում բարձրագույն խմբից դուրս մնացած թիմերը:

Ամեն ինչ սկսվեց աշխարհի առաջնությունում Նիգերիայի ֆուտբոլի հավաքականի ձախողումից, որի համար երկրի նախագահ Գուդլակ Ջոնաթանը որոշես պաշիժ արգելեց ազգային ընտրանուն երկու տարի մրցումներին մասնակցել: Հուլիսին պաշտոնանկ արվեցին ֆեդերացիայի նախագահ Սանի Լուլուն եւ փոխնախագահ Ամանզե Ուգբուլամը, որոնք բողոքել էին երկրի նախագահի նման որոշման դեմ, միաժամանակ ժողովրդից ներողություն էին խնդրել աշխարհի առաջնությունում անհաջող ելույթների համար: Ճիշտ է, մի քանի օրից Ջոնաթանն իր արգելքը վերացրել էր, սակայն կոնֆլիկտը չէր հարթվել:

Ռոմարիոն ու Բեբետոն դարձան պատգամավոր

Բրազիլիայի հավաքականի նախկին ֆուտբոլիստներ, 1994-ի աշխարհի չեմպիոններ Ռոմարիոն եւ Բեբետոն ընտրվել են Ռիո դե Ժանեյրոյի նահանգի օրենսդրական ժողովի պատգամավորներ: Հետաքրքրական է, որ 1994-ի աշխարհի առաջնության լավագույն ֆուտբոլիստ եւ ռմբարկու Ռոմարիոն առաջադրվել էր Սոցիալիստական կուսակցությունից, իսկ Բեբետոն՝ Դեմոկրատականից:

Քվեարկության արդյունքներով 6-րդ տեղը զբաղեցրած Ռոմարիոն ընտրվելուց հետո հայտարարել է, որ ձգտելու է երկրում քաղաքական միասնության հասնել իր նախկին խաղընկերոջ կուսակցության հետ համագործակցելու միջոցով:

Բացի Ռոմարիոյից եւ Բեբետոյից, ընտրություններում իրենց թեկնածությունն էին առաջադրել նաեւ նախկին ֆուտբոլիստներ Տուլիոն, Առլեյը, Ժոաո Լեյտեն, Վամպետան ու Ադեմիր դա Գիյան: Սակայն նրանք չկարողացան անհրաժեշտ քանակի ձայներ ստանալ:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ **Օրվա հետքերով**

Սմեսովը հեռանում է՝ որեւէ կերպ չմեկնաբանելով Փասիեին փոխարինելու լուրերը

«Ազգի» տեղեկություններով՝ հոկտեմբերի 10-ին Ֆրանսիայի դեսպան Սերժ Սմեսովն ավարտում է իր դիվանագիտական առաքելությունը Հայաստանում: Երեկ այդ առնչությամբ նրան ընդունել է Հայաստանի արտգործնախարար **Էդվարդ Նալբանդյանը:**

Նախարարը, ըստ ԱԳՆ հաղորդագրության, բարձր է գնահատել դեսպան Սմեսովի անձնական ավանդը Հայաստանի եւ Ֆրանսիայի միջեւ հաստատված բարեկամական սերտ հարաբերությունների զարգացման գործում:

Շնորհակալություն հայտնելով ջերմ խոսքերի համար՝ դեսպան Սմեսովը գոհունակությամբ արձանագրել է, որ Ֆրանսիան Հայաստանում երկրորդ խոշոր ներդրողն է, ինչը վկայում է ոչ միայն քաղաքական երկխոսության բարձր մակարդակի, այլեւ տնտեսական համագործակցության ոլորտում լուրջ առաջընթացի մասին:

Զրուցակիցները մտքեր են փոխանակել երկկողմ հարաբերությունների, Հայաստան-Եվրոպական միություն համագործակցության, ինչպես նաեւ մի շարք տարածաշրջանային եւ միջազգային հարցերի շուրջը: Հանդիպման ավարտին, ի նշանավորումն հայ-ֆրանսիական հարաբերությունների ամրապնդման գործում դեսպան Սմեսովի ներդրման, նախարար Նալբանդյանը ԱԳՆ հուշամեդալ է հանձնել Սերժ Սմեսովին:

Նշենք, որ տարբեր լուրեր են շրջանառվում Սերժ Սմեսովի դիվանագիտական հեսագա գործունեության առնչությամբ, թե նա կարող է փոխարինել ԵԱՀԿ Մինսկի խմբի ֆրանսիացի համանախագահ Բեռնար Ֆասիեին: Օրերս միջոցառումներից մեկին մասնակցող դեսպան Սմեսովից **«Ազգը»** հայաստանում իր գործունեության առնչությամբ ամփոփիչ հարցազրույց խնդրեց, սակայն դեսպանը մերժեց, նշելով, որ նաեւ չի պարզաբանի մերժման պատճառը: Դեսպան Սմեսովն առանց մեկնաբանության թողեց նաեւ Բեռնար Ֆասիեին փոխարինելու մասին լուրերը: Որեւէ կերպ Հայաստանում իր գործունեության ընթացքին ամփոփիչ անդրադարձ կատարելուց հրաժարվելու պարագան, ավելի շուտ, ծանրացնում է այն լուրերի կշիռը, թե Սերժ Սմեսովը կարող է կրկին լինել մեր տարածաշրջանում՝ արդեն որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի ֆրանսիացի համանախագահ:

Ա. Հ.

ԲԱՑԱՀԱՅՏ ՍՊԱՍՈՒԹՅՈՒՆ

Հայ 20-ամյա հովվին գտել են կախված Քաֆվի բանտում

1-ին էջից

Փաստորեն ակնհայտ է դառնում, որ Սարիբեկյանը ոչ թե «դիվերսանտ-զինծառայող էր», այլ հասարակ գյուղացի հովիվ՝ քաղաքացիական անձ, խաղաղ բնակիչ: Նրան ձերբակալելուց հետո ադրբեջանական քարոզչամեքենան համացանցով մի տեսանյութ տարածեց, որտեղ հայ երիտասարդը պատմում էր, թե իրեն հատուկ գործուղել են Ադրբեջան ահաբեկչական գործողություններ իրականացնելու նպատակով: Այդ կադրերում, սակայն, պարզ երեւում էր, որ երիտասարդի դեմքը պատված է կապտուկներով, հետեւաբար հարեւան երկրի ՊՆ-ի եւ դատախազության համատեղ «դատաքննչական փորձագիտությունը», եթե անցկացվել է, ապա՝ բավական թերի:

Դրանց արդյունքներով Ադրբեջանը կարծես արդարանում է. «Տեսեք՝ մենք մեղք չունենք, հայն ինքն իրեն է սպանել, մենք նրան բոլորովին էլ ճնշումների չենք ենթարկել»: «Խայտառակ երեւույթ է, երբ Ադրբեջանում գերության մեջ գտնվող քաղաքացիական անձը կարող է վերջ տալ իր կյանքին», Tert.am-ին ասել է իրավապաշտպան Արթուր Սաֆունցը: Ըստ նրա՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեն պետք է լուրջ պատասխան պահանջի Ադրբեջանից այսպես կոչված «ինքնասպանության» հանգամանքների վերաբերյալ: «Ես չեմ հիշում մի դեպք, երբ հայկական կողմում գերության մեջ գտնվող որեւէ ադրբեջանցի զինծառայող ինքնասպանության փորձ արած լինի: Կատարվածի պատասխանատվությունը պետք է կրի Ադրբեջանը: Եթե նա ինքնասպան է եղել, այդ ի՞նչ ճնշումների ու անմարդկային վերաբերմունքի է հանդիպել: Ի՞նչն է մարդուն ստիպել դիմել այդ քայլին», եզրափակել է Սաֆունցը:

Իր հերթին՝ Կարմիր խաչի Հայաստանի գրասենյակից տեղեկացնում են, որ՝ «Այժմ Ադրբեջանի հետ բանակցություններ են ընթանում ինչպես երիտասարդ Սարիբեկյանի դին վերադարձնելու, այնպես էլ այլ հարցերով»: Կարմիր խաչից չեն մանրամասնել, թե որո՞նք են «այլ հարցերը»:

Բացվեց Orange-ի նոր խանութը Չարենցավանում

Orange-ը 3G+ ցանցի ընդլայնմանը զուգահեռ շարունակում է բացել նոր խանութներ: Այսօրվանից կգործի Orange-ի խանութ նաեւ Չարենցավան քաղաքում, որը Հայաստանում 53-րդն է: Այստեղ Orange-ի վաճառքի խորհրդատուները հաճախորդներին կընդունեն նույն գեղեցիկ եւ հարմարավետ պայմաններում, ինչպես մյուս բոլոր երկրներում, որտեղ գործում է Orange-ը:

«Այսօր մեր 3G+ ցանցն արդեն ծածկում է Հայաստանի բնակչության 93 %-ը եւ հասանելի է մոտ 600 քաղաքներում եւ գյուղերում: Ծածկույթի ընդլայնման հետ միաժամանակ մենք բացում ենք նոր խանութներ, ինչպես անցյալ շաբաթ՝ Ստեփանավանում, իսկ այս շաբաթ՝ Մարտունիում, Գավառում եւ Վարդենիսում: Միաժամանակ, մեր բաժանորդներին ավելի մոտ լինելու համար մենք շարունակում ենք մեծացնել մեր ներկայությունը նաեւ մյուս քաղաքներում: Մեր բաժանորդների թիվը օրեցօր մեծանում է, եւ մենք ցանկանում ենք ընդունել նրանց հարմարավետ միջավայրում եւ արագ սպասարկել», ասաց Orange-ի գլխավոր տնօրեն Բրուն Դյուքուան այսօր պաշտոնական բացման արարողության ժամանակ:

Տարվա ընթացքում Orange-ը կշարունակի վաճառքի ցանցի ընդլայնումը ինչպես Հայաստանի մարզերում, այնպես էլ մայրաքաղաքում՝ տարեվերջին խանութների քանակը հասցնելով 8 տասնյակի:

ՀՀ ՊՆ-ի հայտարարությունը Սարիբեկյանի մահվան կապակցությամբ

«Որեւէ հիմք չունենալով հավատալու հայ երիտասարդի մահվան վարկածի իսկությանը՝ ՀՀ ՊՆ-ն իր մտահոգությունն է հայտնում այդ առնչությամբ, գտնելով, որ Մ. Սարիբեկյանի ողբերգական մահվան պատասխանատվությունը ամբողջությամբ ընկնում է նրան գերեվարող երկրի՝ Ադրբեջանի վրա: Հրավիրում ենք միջազգային կառույցների, մասնավորապես Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ուշադրությունն այն փաստի վրա, որ Ադրբեջանը հերթական անգամ կոպտորեն խախտում է միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը, մասնավորապես՝ «Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին» կոնվենցիայի դրույթները, անտեսում է ԼՂ հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու ԵԱՀԿ ՄԽ գործադրած ջանքերը՝ նման սադրիչ քայլի գնալով համանախագահների Դաշտային գնահատման առաքելության օրերին:

Արդեն որերորդ անգամ Ադրբեջանը հանցավոր քայլերի է գնում՝ չարժանանալով միջազգային իրավասու կառույցների պարսավանքին: Հենց այդ անպատժելիության զգացողությունն է սպանել միջազգային նորմերով չպաշտպանված մեր հայրենակցին», նշված է ՀՀ ՊՆ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության տարածած հաղորդագրությունում:

Տ. Ա.

ՈՒՂՂՈՒՄ

«Ազգ» օրաթերթի հոկտեմբերի 5-ի թիվ 180 (4560) համարում տպագրված «Դեբեդ-Աղստեւ-ջրառ» ՓԲԸ-ի հայտարարած աճուրդի մասին տեքստում «Աճուրդը կկայանա 05.10.2010 թ.» փոխարեն կարդալ «Աճուրդը կկայանա 05.11.2010 թ.»:

Ի՞նչ սպասենք բյուջե 2011-ից

1-ին էջից

- Որքա՞ն են ավելացել այդ ոլորտներին արվող հատկացումները:

- Լրացուցիչ մուտքերը, որ ունենք 2011-ին 2010-ի նկատմամբ, կազմել են 74 մլրդ դրամ, որն էլ ըստ առաջնահերթությունների կբաշխվի հետեւյալ կերպ: 43 մլրդ դրամը կավելանա սոցիալ-մշակութային ծախսերին՝ սոցիալական պաշտպանությանը, կրթությանը, առողջապահությանը, մշակույթին: Միայն սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղվել է 26,3 մլրդ դրամը, որից 4,4 մլրդն ուղղվելու է ընտանեկան նպաստներին, 16 մլրդ դրամը թոշակներին: Կրթությանը 2011-ին լրացուցիչ ավելացվել է 5 մլրդ դրամ, մշակույթին 1 մլրդ դրամից ավելի, առողջապահությանը՝ 9 մլրդ դրամ, գիտությանը 1 մլրդ դրամ: 6 մլրդ դրամը ավելացվել է ուժային կառույցների եւ հիմնականում պաշտպանության ծախսերին: 7 մլրդ դրամն էլ ուղղվելու է արտաքին պարտքի սպասարկմանը:

- Ինչպե՞ս կփոխվեն թոշակները, աշխատավարձերը, նպաստներն ու սոցիալական այլ ցուցանիշներն այդ ավելացումների արդյունքում 2011-ին:

- Հանրապետության նվազագույն աշխատավարձը 30 հազար դրամից կդառնա 32,5 հազար դրամ, մշակույթի ոլորտի աշխատողների միջին աշխատավարձը բարձրացվելու է 15 տոկոսով: Մասնավորապես, գրադարանների աշխատողների միջին աշխատավարձը 54,6 հազար դրամից դառնալու 62,8 հազար դրամ, թանգարանների աշխատողներինը՝ 50,9 հազար դրամից՝ 58,5 հազար դրամ, մշակույթի տների աշխատողներինը՝ 40,5 հազար դրամից 57 հազար դրամ:

Կենսաթոշակի միջին չափը 25 հազար 738 դրամի փոխարեն 2011-ին կդառնա 28 հազար 396 դրամ: Միջին կենսաթոշակն ավելանալու է մոտ 2600 դրամով: Ընտանեկան նպաստներն ավելանալու են 18 տոկոսով կամ 3500 դրամով՝ 23 հազար 350 դրամի դիմաց կազմելու է 26 հազար 853 դրամ: Մինչեւ 2 տարեկան երեխաների նպաստը 18 հազար դրամից դառնալու է 19,5 հազար դրամ: Պահպանվելու են յուրահանչյուր ծնվող երեխային միանվագ տրվող 50 հազար դրամը եւ երրորդ երեխայի համար տրվող 430 հազար դրամը:

Քաղաքացիական ծառայողների միջին աշխատավարձը չի բարձրացվի: Օրենքով սահմանված երեք տարին մեկ սաժի ավելացման կապակցությամբ ավելացումն իհարկե կլինի, որը սահմանված է օրենքով: Պետական կառավարման համակարգի աշխատողների միջին աշխատավարձը 157 հազար դրամ կլինի, քաղծառայողներինը՝ 137 հազար դրամ: Դատավորների միջին աշխատավարձը չի ավելացվելու եւ կազմելու է 798 հազար դրամ, դատախազներինը նույնպես չի բարձրացվելու եւ կազմելու է 376 հազար դրամ, հարկային ծառայողներինը՝ 232 հազար դրամ:

Ուսուցիչների միջին հաշվարկային աշխատավարձը 116 հազար դրամից դառնալու է 118 հազար դրամ: Գիտության աշխատողների միջին հաշվարկային աշխատավարձը 55,8 հազար դրամի փոխարեն կդառնա 61,4 հազար դրամ:

Առողջապահության ոլորտում հիվանդանոցային բուժման 1 դեպքի միջին գինը 95,2 հազար դրամ է, իսկ հաջորդ տարի նախատեսված է 109,2 դրամ, որը հնարավորություն է տալիս աշխատավարձերի բարձրացման կամ դեղորայքի ձեռքբերման հարցեր լուծել:

Ընդհանրապես սոցիալական ոլորտին բյուջեից հատկացվող ամբողջ գումարը 244 մլրդ դրամից հաջորդ տարի դառնալու է 271 մլրդ դրամ, որի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 7,2 տոկոսն է:

- Կարո՞ղ ենք ասել, որ 2011-ին կհասնենք նախաճգնաժամային ցուցանիշներին: Ինչպիսի՞ն են բյուջե 2011-ի ցուցանիշները 2008-ի համադրությամբ:

- 2008-ին հաստատված է եղել 935 մլրդ դրամ ծախսեր, փաստացին եղել է 788 մլրդ դրամ: 2011-ին, ինչպես արդեն նշեցի, ծախսերը նախատեսված են 998 մլրդ դրամ: Դեֆիցիտը 2008-ի հաստատված բյուջեով 133 մլրդ դրամ է եղել, 2011-ին 148 մլրդ դրամ է նախատեսված: Եկամուտները 2008-ին փաստացի կազմել են 750 մլրդ դրամ, մենք պլանավորում ենք 2011-ին ունենալ 847 մլրդ դրամ, այդ թվում՝ հարկային եկամուտները 2008-ին փաստացի եղել են 615 մլրդ դրամ, իսկ 2011-ին նախատեսվում է 650 մլրդ դրամ: Համախառն ներքին արդյունքը 2008-ին կազմել 3,6 տրիլիոն, 2011-ին ակնկալվում է 3,7 տրիլիոն: Փաստորեն, ինչպես ՀՆԱ, այնպես էլ միայն ֆինանսական ցուցանիշներով 2011-ին 2008-ի համեմատ առաջ ենք անցնելու:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 5.10.2010, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: